Azg Ազգ

8 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2011 ՇԱԲԱԹ 179 (4797)

ISSN: 1829-1651

«Այժմ էլ Հայաստանը մենակ չէ»

Հասատեց Ֆրանսիայի նախագահը՝ հեռանալով Բաքու

ՖՈՏՈԼՈՒՐ

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին Հայաստան կատարած պետական այցի առաջին օրվա երեկոն անցկացրեց Հայաստանի նախագահի ընկերակցությամբ Հանրապետության հրապարակում՝ «Երգող շատրվաններից» ունկդրելով ֆրանսիական ու հայկական երաժշտություն, այդ թվում՝ Շառլ Ազնավուրի կատարումները: Հրապարակում գտնվող երևանցիները ողջունել են երկու նախագահներին, որոնք, ինչպես հետագայում ակնհայտ դարձավ, «ընկերներ ու բարեկամներ են»:

Նաեւ գործընկերներ

«Ջերմորեն ողջունում եմ իմ բարեկամին, Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիին եւ նրան ուղեկցող պատվիրակությանը Հայաստանում», այսպես սկսեց իր խոսքը ՀՀ նախագահը ֆրանսիացի գործընկերոջ հետ համատեղ ասուլիսում: Արդեն որոշներ անց Երեւանի Ֆրանսիայի հրապարակում Ֆրանսիայի նախագահը պիտի խոսներ՝ «Հայաստանն ու Ֆրանսիան հավերժ քույր երկրներ են», իսկ նախագահ Սարգսյանը, Սարկոզիին ներկայացնելով, պիտի շեշտի՝ «իմ ընկեր Նիկոլա Սարկոզի»՝ արժանանալով Ֆրանսիայի նախագահի հաստատող ժպիտին:

Երեկ առավոտյան ՀՀ նախագահի նստավայրում՝ դիմավորման արարողությունից հետո, երկու նախագահները առանձնազրույց ունեցան, որի ընթացքում Սերժ Սարգսյանը Ֆրանսիայի նախագահին պարգեւատրեց «Փառքի» շքանշանով՝ «հայ-ֆրանսիական ավանդական բարեկամական հարաբերությունների ամրապնդման, Հայաստանի ու Ֆրանսիայի միջեւ համակողմանի համագործակցության խորացման եւ ընդլայնման, ինչպես նաեւ խաղաղության ու միջազգային անվտանգության պաշտպանության գործում ներդրած անձնական ավանդի համար»: Նախագահների առանձնազրույցին զուգահեռ տեղի են ունեցել պաշտոնական պատվիրակությունների կազմում ընդգրկված նախարարների երկկողմ հանդիպումներ, որտեղ քննարկվել են տարբեր ոլորտներում հայ-ֆրանսիական համագործակցության զարգացմանն առնչվող հարցեր:

Արդեն համատեղ ասուլիսում Հայաստանի նախագահը ընդգծեց Ֆրանսիայի կարեւորությունը Հայաստանի համար. «Դա պայմանավորված է հայ-ֆրանսիական պատմական սերտ առնչություններով, միջազգային ասպարեզում Ֆրանսիայի ունեցած նշանակալի դերով, ԵԱՀԿ Մինսկի խմբում համանախագահ լինելու հանգամանքով, Ֆրանսիայում բնակվող շուրջ կես միլիոնի հասնող հայկական համայնքով, այլ գործոններով», նշեց ՀՀ նախագահը:

Տես էջ 3

«Մեր քաղաքացիական պարտքն է օգնել, պաշտպանել եւ ամրապնդել Ռուսաստանը»

Հարցազրույց Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան Արա Աբրահամյանի հետ

- Պարոն Աբրահամյան, Դուք Ռուսաստանում բավական հայտնի մարդ եք, եւ Ձեր հեղինակությունը համաշխարհային մակարդակի հասավ 2005-ին նիգերիական բանից ռուսաստանցի նավաստիների փրկագնման հայտնի դեպքերից հետո: Ինչո՞ւ հենց Դուք զբաղվեցիք այդ հարցով:

- Նախ թույլ տվեք շնորհակալություն հայտնել ձեր թերթի խմբագրությանը «Բազմազգ Մոսկվա» նախագծի իրականացման համար, քանի որ Մեծ Ռուսաստանի պատմությունը եւ նրա մայրաքաղաքի կյանքը անկարելի է դիտարկել իր բազմազգ եւ բազմադավանանք ժողովրդից կտրված:

Ինչ վերաբերում է Ռուսաստանում եւ արտերկրում իմ հայտնի լինելուն, դա առաջին հերթին կապված է իմ գործարար եւ հասարակական աշխատանքների հետ: Ես սովոր չեմ գործով զբաղվել թեւաթափ վիճակում, միշտ ջանացել եմ հասնել բարձր արդյունքի, օգուտ տալ մարդկանց, հասարակությանը եւ պետությանը: Չարժե խոսել նիգերիական բանից ռուսաստանցի նավաստիների փրկագնման մասին: Ձեզ հավատացնում եմ, որ նման բան հազիվ թե տեղի ունենար, եթե այն ժամանակ ես լայն եւ կարեւոր կապեր չունենայի քաղաքականության, բիզնեսի եւ քաղաքացիական հասարակության աշխարհում:

Ինչո՞ւ ես զբաղվեցի աֆրիկյան գերությունից ռուսաստանցի նավաստիների ազատագրման հարցով: Այն ժամանակ ինձ հաջողվել էր ազատագրել Հասարակածային Գվինեայում անհիմն կերպով դատապարտված հայ օդաչուներին: Ռուսաստանի արտգործնախարար Ս. Լավրովը եւ Դումայի միջազգային հարաբերությունների կոմիտեի նախագահ Կ. Կոսաչովը ինձ խնդրեցին օգնել նիգերիական գերությունից ռուսաստանցի նավաստիների ազատագրման գործում: Նրանց ազատագրելու համար ես դիմեցի բազմաթիվ ազդեցիկ անձանց, մասնավորապես օգտագործելով Հռոմի պապի հեղինակությունը: Սիրված եղա քանիցս մեկնել Նիգերիա, բանակցել այդ պետության նախագահի եւ ուրիշ պաշտոնյաների հետ, նրանց անել մի շարք գործնական առաջարկություններ, հաշվի առնել համապատասխան շահերը, առաջ քաշել մեր նավաստիների ազատագրման համալիր ծրագիր: Մենք հաղթահարեցինք մի շարք փուլեր եւ բարդ բանակցություններ, բայց որ գլխավորն է՝ հասանք դրական արդյունքների՝ նավաստիների ազատագրմանը եւ նրանց հայրենադարձմանը:

Հայերը միշտ եղել են Ռուսաստանի հետ, եւ այսօր մեր քաղաքացիական պարտքն է օգնել, պաշտպանել եւ ամրապնդել երկիրը:

Տես էջ 4

Մահացել է Սարգիս Սողանալյանը

20-րդ դարի մեծագույն զինավաճառներից մեկը

Հոկտեմբերի 6-ին Մայամիի (Ֆլորիդա, ԱՄՆ) «Հայալիա» հիվանդանոցում 82 տարեկան հասակում սրտի կաթվածի հետեւանքով մահացել է Սարգիս Սողանալյանը: 1990-ական թվականներին նրա անունը վայր չէր իջնում աշխարհի, հատկապես Մ. Նահանգների մամուլի էջերից: Հակասական մի անձնավորություն, որ ճանաչված էր որպես դարի մեծագույն զինավաճառներից մեկը, որ, միաժամանակ սերտորեն համագործակցում էր ամերիկյան գաղտնի ծառայությունների հետ: Իրանի դեմ Իրաքի շղթայազերծած պատերազմում նա Սադդամ Հուսեյնի զենքի գլխավոր հայթայթիչն էր ամերիկյան իսկ կողմի քաջալերանքով, իսկ հետագայում աղմկահարույց դատական բազմաթիվ գործեր ձեռնարկվեցին նրա դեմ նույն՝ ամերիկյան իշխանությունների խարդավանքներով:

Ծնված Բեյրութում, հաճընցի ծնողներից, 80-90-ականներին նա առատաձեռն մասնակցություն էր ունենում ազգային եւ կուսակցական (հնչակյան) զանազան ձեռնարկումներում:

Ավելի ընդարձակ՝ կարդացեք մեր առաջիկա համարում:

Ֆրանսիացի գործիչները՝ Հայաստանի մեդալներով ու շքանշաններով

Նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով հայ-ֆրանսիական ավանդական բարեկամական հարաբերությունների ամրապնդման եւ զարգացման, Հայաստանի ու Ֆրանսիայի միջեւ միջպետական համագործակցության խորացման եւ ընդլայնման գործում ներդրած նշանակալի ավանդի համար Սուրբ Մեսրոպ Մաշտոց շքանշանով է պարգեւատրվել Ֆրանսիայի պետական նախարար ԱԳ նախարար Ալեն Ժյուպեն: ՀՀ Պատվո շքանշանով են պարգեւատրվել Ֆրանսիայի արդյունաբերության, էներգետիկայի եւ թվային տնտեսության նախարար Էրիկ Բեսոնը, համագործակցության նախարար Անրի դը Ռենկուրը, տրանսպորտի նախարար Թիերի Մարիանին, արտաքին առեւտրի պետական քարտուղար Պիեռ Լելուշը, Ֆրանսիայի նախագահի հատուկ խորհրդական Անրի Գենոյը, նախագահի դիվանագիտական խորհրդական Ժան-Դավիդ Լեւիտը: Իսկ ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոյը, Ֆրանսիայի նախագահի խորհրդական Ֆրանկ Լուվիերը, նախագահի աշխատակազմի ղեկավար Գիյոմ Լամբերը, պետական արարողակարգի ղեկավար Լորան Ստեֆանին ու նախագահի խորհրդական Դամիան Լորասն արժանացել են Մխիթար Գոշ մեդալների:

Հ. Ա.

Ադրբեջանցիների «արտգալ» վերաբերմունքը Հայաստանի ժողովրդավարությանը հունից հանում է

Կրակում են մե՛կ փամփուշտներով, մե՛կ խոսքերով

ԱՂԱՎՆԻ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ստեփանակերտ

Ղարաբաղյան խնդիրը, արդեն ամենայն հավանականությամբ, հասել է մի կետի, երբ ինչ-որ քայլեր պետք է իրականացնել, պետք է առաջընթաց ապահովել բանակցություններում, այլապես գնալով զգալի է դառնում հայ-ադրբեջանական «շփումներից» միջազգային հանրության տարբեր ներկայացուցիչների հոգնածությունը:

Շատ այլ հակամարտություններ շարունակում են չլուծված մնալ շատ ավելի երկար ժամանակահատվածում, բայց դա բնավ էլ չի նշանակում, որ ղարաբաղյանի կարգավորման պատմությունը պետք է շարունակ ձգձգվի՝ այդպես էլ չհամակերպվելով արդեն իսկ առկա իրողությունների հետ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գոյությունը փաստ է, որի հետ վաղ թե ուշ հաշտվելու է նույն այդ միջազգային հանրությունը՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի մոտեցում կդրսեւորի Ադրբեջանը, որն, ի վերջո, արդեն առնվազն 20 տարի որեւէ առնչություն չունի Արցախի հետ, բացի այդ ուղղությամբ հնչող հիստերիկ ու անհեթեթ հայտարարություններից ու ժամանակ առ ժամանակ արձակվող կրակոցներից:

Հերթական անգամ զինադադարի խախտումը մահվան պատճառ դարձավ: Ինչպես տեղեկացրել է «**Ազգը**», հոկտեմբերի 5-ին, ժամը 17.00-ի սահմաններում ղարաբաղա-ադրբեջանական հատվածում ադրբեջանական կողմից արձակված կրակոցից գլխի շրջանում սանալով հրազենային մահացու վիրավորում, զոհվել է ՊԲ զինծառայող, 24-ամյա 3ուրի Արամի Սարգսյանը:

Տես էջ 3

Կաթողիկոսը մեկնեց ԱՄՆ Արեւելյան թեմ

Հոկտեմբերի 7-ին Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց ԱՄՆ հայոց Արեւելյան թեմ:

Այցի ընթացքում Նորին սրբությունը հանդիպումներ կունենա Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարների հետ՝ քննարկելու իրենց կողմից ստանձնած Մայր աթոռի տարբեր ծրագրերի ընթացքը:

Վեհափառ հայրապետին ուղեկցում է Մայր աթոռի միաբան Տ. Արիս աբեղա Տոնոյանը:

ԱԶԳ

Ընթացիկ

Վրաստանը քայլ-քայլ մարվում է կոռուպցիայից, իսկ մենք...

Հոկտեմբեր 5-ից Վրաստանում է Հայաստանի Վերահսկիչ պալատի պատվիրակությունը՝ Վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Զաքարյանի գլխավորությամբ: Պատվիրակությունը եւ Հայաստանից մեկնած լրագրողների խումբը բավական տպավորիչ այցելություններ կատարեցին Ռուսթավիի արդարադատության տուն, ներքին գործերի նախարարության ծառայության գործակալություն, դիտեցին մախային գոտու բոլոր բարեփոխումները՝ փաստորեն սեփական աչքով տեսնելով Վրաստանի ընտրած ուղին հակակոռուպցիոն ճանապարհով եւ այդ ուղին իրականություն դարձնելու վրացական իշխանությունների կամքը: Պատվիրակությունն ու լրագրողներս տպավորված էինք պետական կառուցվածքները մոդեռնացնելու վրացիների ջանքերով, որոնց շնորհիվ եւ Վրաստանի պետական բյուջեի բեռն է թեթեւացվել, եւ այս երկրի հասարակ քաղաքացու կյանքը, միաժամանակ եվրոպական չափանիշներով ոլորային իական բարեփոխումներ են կատարվել:

Վրացի չինովնիկներն ասում էին, որ վերջին տարիներին մեկիկ-մեկիկ նայում են տարբեր ոլորտներում ողջ աշխարհի դական փորձը, եւ որը հնարավոր է՝ ներդնում են: Փաստորեն Վրաստանում բարեփոխումները ոչ թե թղթի վրա են, ինչպես հաճախ մեզ մոտ, այլ մտել են կյանք, հասել պետությանն ու հասարակ քաղաքացուն: Սրա հասարակ ապացույցներն ամենուր էին. թեկուզ այն, որ եթե Վրաստանի որեւէ քաղաքացուն հարցնես, նա հպարտությամբ կպատմի բոլորների ընթացքում անձնագիր ստանալու, ծնունդ գրանցելու կամ մեքենա վարելու վկայական ստանալու մասին, եւ այդ բոլորը՝ առանց չինովնիկական միջամտության, էլեկտրոնային եղանակով: Եթե, օրինակ, սովորել ես մեքենա վարելու բոլոր կանոնները, կարող ես գնալ արդարադատության տուն, նստել համակարգչի մոտ, էլեկտրոնային եղանակով ստանալ հանձնել, եւ եթե պատասխանդ բավարարի վիրտուալ քննության պահանջներին, հենց համակարգիչը քեզ կուղարկի լուսանկարվելու թվային խցիկում, դրանից հետո թվային եղանակով վարորդական իրավունք կստանաս՝ այդ բոլորի վրա ծախսելով շատ քիչ ժամանակ եւ տանելի գումար:

Կամ նույն կերպ՝ Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացի գիտի, որ այսօր էլեկտրոնային եղանակով 10-15 րոպեում կարող է անձնագիր ստանալ, ամուսնություն գրանցել, անշարժ գույքի առուվաճառք կատարել:

Պատվիրակության տեսածն ու լսածը ցնցող են, իսկ Հայաստանի հետ համեմատություն կատարելու պարագայում՝ պարզապես տխուր վիճակի մեջ կարելի է ընկնել: Մարդիկ վերցրել են ամենակոռուպցիոն բնագավառները՝ ոստիկանություն, արդարադատություն, պետական գույք, անշարժ գույք, նոտարական ծառայություններ, պետական գրանցումներ, ռեգիստրներ, դրանք խմբավորել-երկու օղակ են սարքել, մեկի անունը դրել են արդարադատության տուն, մյուսը ոստիկանության համակարգում մի օղակ՝ «ՆԳՆ ծառայության գործակալություն» անունով, դրանցում բոլոր գործառույթներն էլեկտրոնային են, չինովնիկի հետ շփումը նվազագույն է, վճարովի ծառայություններ համակարգչով՝ առանց կաշառքի, առանց էս ու էն թուղթը պահանջելու-խաղացնելու, առանց մաս լիզող միջնորդների: Պետական բյուջեից ոչ մի վճարում էդ երկու համակարգերը չեն ստանում, դեռ իրենք են բյուջե լցնում-տալիս՝ մեկը քսան միլիոն դոլար է աշխատում, մյուս օղակն ութսուն միլիոն, տասնութ տոկոս հարկ են տալիս, մնացածը մնում է հիմնարկին՝ բարձր աշխատավարձ ապահովելով, իսկ Վրաստանի հասարակ քաղաքացին ուղղում է մեջքը եւ ասիճանաբար ազատվում կոռուպցիայի ցեցից:

Այս բոլորի մասին Երեւան վերադառնալով դեռ շատ մանրամասն պատմելու ենք, ասենք միայն, որ Հայաստանի պատվիրակությունը մի շարք հանդիպումներ ունեցավ. նախ մեկնեցինք Թբիլիսի, որտեղ Վրաստանի Վերահսկիչ պալատում տեղի ունեցավ Հայաստանի եւ Վրաստանի վերահսկիչ պալատների նախագահներ Իշխան Զաքարյանի եւ Լեւան Բեժաբվիլիի հանդիպումը: Ապա տեղի ունեցավ փոխըմբռնման հուշագրի ստորագրում, որն, ի դեպ, երկու երկրների անկախության հռչակումից հետո առաջին համագործակցության պայմանագիրն է վերահսկիչ պալատների միջեւ, եւ այս առումով հիմնարար նշանակություն ունի հետագայում փորձի եւ կադրային փոխանակումների, ինչպես նաեւ համատեղ եւ զուգահեռ վերահսկողության իրականացման տեսակետից: Եկող տարի համատեղ աշխատանքային ծրագիր է հաստատվելու, որով զույգ վերահսկիչ պալատներն առաջնորդվելու են: Հուշագրի ստորագրումից առաջ Վրաստանի Վերահսկիչ պալատի նախագահ Լեւան Բեժաբվիլին ասում էր, որ Վրաստանի խորհրդարանը բյուջեն վերահսկելիս եւ անգամ քննարկումների ժամանակ խիստ հաշվի է նստում բյուջեի վերահսկման Վերահսկիչ պալատի մոտեցումների հետ, նրա տվյալներն ընդունում որպես հիմք: Մեր Ի. Զաքարյանն էլ նշեց, թե կողմերի աշխատանքները լավ արդյունք կունենան, եթե նաեւ օրենքները լավը լինեն զույգ երկրներում եւ այդ օրենքները աշխատեն: Ընդհանրապես՝ փոխադարձ վստահությունը պետք է պարտադիր պայման լինի համատեղ աշխատանքում, իսկ ներկա համաձայնագիրը հետագայում աշխատելու միայն մեկնարկ է:

Այնուհետեւ մեր պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ Վրաստանի խորհրդարանում, դիտեց խորհրդարանի աշխատանքի հնարավորությունները, վերահսկիչ պալատների համագործակցության թեմայով զրույց- հանդիպումներ եղան Վրաստանի պառլամենտի փոխխոսնակ Ռուսուդան Մկերվալիշվիլիի, ֆինանսաբյուջետային հանձնաժողովի նախագահ Զուրաբ Մելիքիշվիլիի հետ: Այս բոլոր հանդիպումների հետաքրքրական մանրամասները առաջիկայում կներկայացնենք:

ՄԱՔԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իլհամ Ալիեւի պատված հյուրը՝ Ադրբեջանի «սեւ ցուցակում»

Տրամաբանություն ակնհայտորեն չկա, եթե որեւէ այլ սկզբունք կամ գործոն տեղ ունի այն ամենում, ինչը կոչվում է Ադրբեջանի «սեւ ցուցակ»: Ինչպես գիտենք, ամեն դեպքում, որ «առանց Ադրբեջանի իմացության ու թույլտվության» համարձակվի այցելել Արցախ, անմիջապես կհայտնվի Ադրբեջանի «սեւ ցուցակում»: Հենց միայն սա արդեն անտրամաբանական է. եթե, ասենք, ոմն ֆինն պատմաբան կամ հետազոտող, լսելով հնամենի Արցախի մասին (որի այդպիսին լինելը չեն ժխտում անգամ ադրբեջանցիները- Հ. Ա.) ցանկանում է այցելել Արցախ, ապա, ըստ ադրբեջանական տրամաբանության, նա դա անել չի կարող, քանի որ այժմ Արցախ կարելի է մուտք գործել ոչ Ադրբեջանից: Բացի սրանից՝ ինչո՞ւ ՀՀ այն քաղաքացիները, որոնք անարգել մուտք են գործում ԼՂՀ, չեն հայտնվում ադրբեջանական «սեւ ցուցակում», միգուցե բոլոր ՀՀ քաղաքացիները արդեն այնտեղ ներառվա՞ծ են: Իսկ եթե այդպես է, ապա էլ ի՞նչ բարիդրացիություն, ասենք, հակամարտության լուծման պարագայում ի՞նչ պետք է լինի այդ «սեւ ցուցակի» հետ: Ինչպե՞ս պետք է Ադրբեջանը, իսկ որն ավելի կարեւոր է՝ ադրբեջանցի ժողովուրդը, արդի փաստացի «անցանկալի հարեւանների հետ»:

Ինչեւէ, այժմ ադրբեջանական «Ազադլիգ»-ի հետ փորձ-ինչ ծիծաղենք Ադրբեջանի «սեւ ցուցակի» վրա: Ամերիկացի սենատոր Ջոզեֆ Սիմիթյանը հայտնվել է այդ ցուցակում Արցախ այցելելու համար: Այս մասին պաշտոնապես հաստատում է տվել Ադրբեջանի ԱԳՆ մամուլի քարտուղար Էլմար Աբդուլաեւը: Սակայն պատմությունը սրանով չի ավարտվում: Մասնավորապես նույն Սիմիթյանն ընդամենը օրեր առաջ Բաքվում էր, ավելին, սենատորին ընդունել էր նախագահ Իլհամ Ալիեւը անձամբ: Ըստ «Ազադլիգ»-ի՝ այդ հանդիպման ժամանակ Իլհամ Ալիեւը իր գոհունակությունն է հայտնել սենատորին, որ «Բաքվի ու Վաշինգտոնի կապերը հաջողությամբ զարգանում են»: «Ալիեւը ընդգծել է երկկողմ հարաբերությունների ընդլայնման գործում փոխադարձ այցերի կարեւորությունը: Ավելին, Ադրբեջանի նախագահը գոհունակություն է հայտնել անձամբ Սիմիթյանի գլխավորած պատվիրակությանը՝ Ադրբեջան կատարած այցի կապակցությամբ», հիշեցնում է «Ազադլիգը»: Սակայն, ինչպես վկայում է ադրբեջանական պարբերականը, «Ադրբեջանի ղեկավարությունը լավ գիտեր Կալիֆոռնիայի նահանգի օրենսդիր մարմինը ներկայացնող սենատորի ազգությամբ հայ լինելու եւ բազմիցս Արցախ կատարած նրա այցերի մասին: Ինչպես երեւում է, Ադրբեջանի ղեկավարությունը աշխատել է ամերիկացի սենատորի՝ Իլհամ Ալիեւի հետ հանդիպումից օգտվել քարոզչական նպատակներով, սակայն հետո սենատորի ԼՂ կատարած այցը նրանց փաստի առջեւ է կանգնեցրել, նրանց մեջ արթնացել է «հայրենասիրական զգացմունքը»: Եվ Ադրբեջանը հերթական անգամ հայտնվել է ծիծաղելի վիճակում», արձանագրում է «Ազադլիգը»: Թերեւս ոչինչ չկա ավելացնելու. ամեն ինչ ինքնին պարզաբանված է: Ամեն դեպքում մի հարց. եթե բոլոր նրանք, որ այցելում են ԼՂ առանց Բաքվի գիտակցության, «իրավունք չունեն մտնելու Ադրբեջան», ապա չի՞ նշանակում միայն այս փաստը, որ Բաքուն հստակ սահմանագիծ է դնում ԼՂ-ի եւ Ադրբեջանի միջեւ: Երկրորդ՝ չի՞ նշանակում այս փաստը, որ եթե տան հյուրերը «անցանկալի են», որովհետեւ «այցելում են կոնկրետ այդ տուն», ուրեմն տունը նույնպես պետք է անցանկալի լինի իր բնակիչներով: Այսինքն՝ ԼՂՀ-ի այսօրվա քաղաքացիները նույնպես անցանկալի անձեր են Ադրբեջանում: Եթե այո, ապա էլ ի՞նչ են ուզում. տարածք, առանց այդ նույն տարածքի բնիկ ժողովրդի՞...:

Հ. ԱՓՅԱՆ

ՅՈՒՅՑԱՀԱՆԴԵՍ-ՏՈՆԱՎԱՃԱՌ

Ամենամյա «Դիջիթեք» եւ աշխատանքի տոնավաճառ

Ոլորտի տարեկան ընդհանուր արտադրանքի ծավալը կազմում է 200 մլն դոլար

Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում երեկ բացվեց 7-րդ ամենամյա միջազգային տեխնոլոգիական «Դիջիթեք» (DigiTec) եռօրյա ցուցահանդեսը: Ցուցահանդեսում տեղ աշխատում է 10 հազար մարդ: Ոլորտի տարեկան ընդհանուր արտադրանքի ծավալը կազմում է 200 մլն դոլար: Վարչապետի համոզմամբ՝ տարեցտարի այդ ծավալներն աճելու են: Ցուցահանդեսին մաս-

բացման խոսքով հանդես եկավ Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը: «Այս տարի ցուցահանդեսին մասնակից ընկերությունների թվի 70 տոկոսով աճի փաստը վկայում է, որ «Դիջիթեքն» իր ուրույն տեղն է զբաղեցնում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բնագավառում», նշեց վարչապետը, ավելացնելով, որ կառավարության եւ ՏՏ ոլորտի համագործակցության շնորհիվ ստեղծվել են լուրջ նախադրյալներ, որպեսզի «այս բնագավառը հանդիսանա մեր տնտեսության զարգացման կարեւորագույն շարժիչներից մեկը»:

Ըստ Տիգրան Սարգսյանի՝ ներկայումս տեղեկատվական տեխնոլոգիաների եւ հեռահաղորդակցության ոլորտներում գործում են մի քանի հարյուր ձեռնարկություններ, որնակցում են 115 ընկերություններ: Այս տարի Արցախը ցուցահանդեսին մասնակցում է առանձին տաղավարով: Նախատեսված աշխատանքի տոնավաճառում ոլորտի 30-40 ընկերություններ կներկայացնեն իրենց ընկերության թափուր աշխատատեղերը եւ կրթական ծրագրերը:

Ցուցահանդեսի պլատինե հովանավոր «Վիվասել-ՄՏՍ»-ն 3 տաղավարում ներկայացրել է իր նորարարական առաջարկներն ու ապրանքները: Ըստ ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի՝ թվային աղագան ժամանակակից աշխարհի մարտահրավերն է, եւ «ուղղակի անհրաժեշտություն է տեխնոլոգիական նորարարությունների վերաբերյալ իրազեկվածության ապահովումը, ինչի դրսեւորումն է նաեւ այս ցուցահանդեսը»:

Ա. Մ.

Շինարարության նախագիծը վերադարձվել է

Սեպտեմբերի 22-ին «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Անահիտ Բախչյանը նամակով դիմել է մշակույթի նախարարին՝ խնդրելով տրամադրել տեղեկություն «Կեչառիս» պատմամշակութային համալիրի մերձակա տարածքում սննդի օբյեկտի կառուցապատման առնչությամբ Կոտայքի մարզպետի ներկայացրած էսքիզային նախագծի վերաբերյալ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի որոշման մասին: Հոկտեմբերի 5-ին նախարարը պատասխան նամակով հայտնում է, որ հասարակական օբյեկտի կառուցապատման էսքիզային նախագիծը, գործող ընթացակարգի համաձայն քննարկվել է ՀՀ մշակույթի նախարարության համապատասխան ստորաբաժանման մասնագետների կողմից, եւ նախագծի փաթեթի ոչ ամբողջական լինելու, ինչպես նաեւ՝ պատմական միջավայրին ոչ հարիր տրված լուծումների պատճառով, այն չի դրվել քննարկման նախարարության գիտամեթոդական խորհրդի նիստին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գրավաճառ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

ԱԶԳ

Անցուդարձ

«Այժմ էլ Հայաստանը մենակ չէ»

1-ին էջից

Սերժ Սարգսյանը ընդգծեց, որ այսօր հայ-ֆրանսիական հարաբերություններում ձեւավորվել է բարձր մակարդակի երկխոսություն, արդյունավետ զարգանում է միջխորհրդարանական համագործակցությունը, առկա են սերտ մշակութային, կրթական առնչություններ, շոշափելի է ֆրանսիական ընկերությունները ներկայությունը Հայաստանի տնտեսության մեջ, հաջողությամբ է զարգանում տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությունը: «Հատուկ անդրադարձ կատարեցինք երկկողմ հարաբերությունների առեւտրատնտեսական բաղադրիչին, եւ շատ ուրախ եմ, որ պարոն նախագահը իր հաստատակամությունը հայտնեց Հայաստանի զարգացման ծրագրերին ֆրանսիական ընկերությունների մասնակցությունը խրախուսելու գործում», ասաց նախագահ Սարգսյանը՝ հավելելով, որ հատկապես ուրախալի է Ֆրանսիայի պատրաստակամությունը ներգրավվելու Հայաստանի ատոմակայանի նոր էներգաբլոկի կառուցման աշխատանքներում: Այս կապակցությամբ Սարկոզին նշեց, որ առաջիկայում Ֆրանսիայից պատվիրակություն կժամանի Հայաստան՝ ուսումնասիրելու ատոմային էներգետիկայի հարցում մեր երկրին օգտակար լինելու հնարավորությունը. «Ֆրանսիան կաջակցի Հայաստանին այընտրանքային էներգիայի աղբյուրներ գտնելու հարցում», նշեց Սարկոզին:

«Եթե Թուրքիան չճանաչի Հայոց ցեղասպանությունը, Ֆրանսիան ավելի հեռուն կգնա»

Ֆրանսիացի լրագրողի հարցը երկու նախագահների ասուլիսում մնաց անպատասխան: Լրագրողը խնդրեց Սարկոզիին՝ մեկնաբանել Եվրոպայում մոլեգնող ֆինանսական ճգնաժամը, ինչին ի պատասխան Ֆրանսիայի նախագահն ասաց. «Ամեն ինչ իր տեղն ու ժամանակն ունի: Այժմ, գտնվելով բարեկամ Հայաստանում, մի երկրում, որի ժողովուրդը շատ է տանջվել, ես ցանկություն չունեմ խոսելու այլ բաներից՝ բացի հայ ժողովրդին ու Հայաստանին հուզող խնդիրներից»: Իսկ սրանցից մեկն անշուշտ հայ-թուրքական հարաբերություններն են, Ցեղասպանության միջազգային ճանաչման դատապարտման հարցը, եւ այս համատեքստում ԵՄ-ին Թուրքիայի հնարավոր անդամակցությունը. բոլոր այս հարցերին նախագահ Սարկոզին անդրադարձավ: «Եթե Թուրքիան չճանաչի Հայոց ցեղասպանությունը, ապա Ֆրանսիան ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարցում ավելի հեռուն կգնա. մասնավորապես կրթականացնի Ցեղասպանության ժխտումը: Ժամանակն անսահմանափակ չէ, եւ զարգացումներից կախված՝ Ֆրանսիան կարող է այդ քայլին գնալ իմ նախագահության տարի», հայտարարեց Սարկոզին՝ ավելի հստակեցնելով. «Եթե Թուրքիայի նման մեծ երկիրը ճանաչի իր պատմությունն ու դարի սկզբին իրագործված ցեղասպանությունը, Ֆրանսիան ու Հայաստանը դա կընկալեն որպես խաղաղության մեծ ժեստ, Հայաստանի հետ հաշտեցման ժեստ, քանի որ պատմական իրողությունը ժխտելով մնայուն հաշտեցումն անհնար է»: Սարկոզին ընդգծեց նաեւ, որ 2011-ին անընդունելի է ունենալ փակ սահմաններ. «Վստահեցնում եմ, որ Ֆրանսիան կշարունակի սատարել Հայաստանի նախագահի խաղաղասիրական ջանքերին», շեշտեց Սարկոզին:

Ռոդենի արձանը՝ երկու քույր երկրների հավերժ բարեկամության գրավական

Աշխարհահռչակ Օգյուստ Ռոդենի հեղինակած Ժյուլ Բասիեն Լըպաժի արձանը, որը Ֆրանսիայի նվերն է Հայաստանին, երեկ Երեւանի Ֆրանսիայի հրապարակում բացեցին նախագահներ Սարկոզին ու Սարգսյանը: Այսպիսով Հայաստանի մայրաքաղաքը հարստացավ համաշխարհային մշակույթի այս եզակի գործով: Բազմամարդ հրապարակում նախագահները ելույթ ունեցան, Սարկոզին ուղերձով դիմեց Հայաստանին ու հայ ժողովրդին՝ «Հայաստանն ու Ֆրանսիան հավերժ քույր երկրներ են», ասելով: Ընդ որում՝ Ֆրանսիայի նախագահը հայերենով եզրափակեց իր ելույթը՝ «Կեցցե՛ Հայաստանը, կեցցե՛ Ֆրանսիան»: Սակայն այս բառերը հայերերով արտասանված միակը չէին, որ արտասանեց նախագահ Սարկոզին. եւս մեկ անգամ ընդգծելով, որ դարասկզբի իրադարձությունները պետք է անվանել հենց ցեղասպանություն, Ֆրանսիայի նախագահը «ցեղասպանություն» բառն արտասանեց հայերեն: Ֆրանսիայի հրապարակում տեղակայված երկու մեծ էկրաններին Փարիզի ու Երեւանի տեսարաններ էին, հավաքվածների ձեռքերին՝ Հայաստանի ու Ֆրանսիայի դրոշները, հնչում էր ֆրանսիական երաժշտություն, պարբերաբար՝ Շառլ Ազնավուրի կատարումները: Մեծ շանսոնյեն նույնպես հրապարակում էր, որին «մեզ հետ լինելու համար» հատուկ շնորհակալություն հայտնեց Ֆրանսիայի նախագահն իր ելույթում:

Սարկոզին տվեց նաեւ մի շարք անվանի ֆրանսահայերի անուններ, որոնք «էական դեր են խաղացել ու խաղում Ֆրանսիայի կյանքում»: Մեր անկախության 20 տարիներն անվանելով «սքանչելի», նախագահ Սարկոզին շեշտեց. «Հայերը գիտեն, որ Ֆրանսիան օգնության ձեռք մեկնեց հայ ժողովրդին իր ողբերգության՝ Ցեղասպանության ժամանակ: Այժմ էլ Հայաստանը մենակ չէ»:

Այնուհետեւ հավաքված բազմության հետ «ձեխեղմումների ճանապարհ» անցնելով՝ երկու նախագահներն ուղեւորվեցին օդանավակայան, որտեղից Սարկոզին մեկնեց Բաքու: Երեկ երեկոյան Ֆրանսիայի նախագահն արդեն Թբիլիսիում էր, որտեղ քաղաքի տոնի հետ կապված՝ Վրաստանի մայրաքաղաքի Ազատության հրապարակում ելույթ ունեցավ: Փաստորեն տարածաշրջանային այցի ընթացքում Ֆրանսիայի նախագահը Բաքվում ու Թբիլիսիում անցկացրեց ժամեր, այնինչ Երեւանում ոչ լրիվ երկու օր, ինչպես եւ վայել է երկու «հավերժ քույր պետություններին»:

Կարելի է արձանագրել, որ Ֆրանսիայի նախագահի պետական այցը Հայաստան երկու հստակորեն ուրվագծված սլաքներ ուներ: Նախ՝ այն ուղղված էր «ֆրանսահայ քվեին», մասնավորապես «Ֆրանսիայի հայ համայնքը՝ ընդգծված կեսմիլիոնանոց», կարմիր թելի պես անցնում էր Սարկոզիի գրեթե բոլոր ելույթներում: Բացի սրանից՝ սա ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահի այց էր, որը «հորդորում է կողմերին գնալ խաղաղության ռիսկի, վերսկսել խաղաղության ուղիով ընթանալը», իհարկե, նախագահական ընտրությունների պատրաստվող Սարկոզին չէր մոռանում ընդգծել. «Այժմ էլ Հայաստանը մենակ չէ»:

ՍՅԺ

Հայաստան է ժամանում ֆիզիկայի գծով Նոբելյան մրցանակակիր Ժորես Ալֆյորովը

Հայաստան է ժամանում ֆիզիկայի գծով Նոբելյան մրցանակի դափնեկիր, ՌԴ Գիտությունների ակադեմիայի փոխնախագահ Ժորես Ալֆյորովը: ՀՀ ԳԱԱ նախագահության ընդլայնված նիստի ընթացքում (հոկտեմբերի 10-ին՝ ժամը 10:00-ին, ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճ, Բաղրամյան 24) Ժորես Ալֆյորովին կշնորհվի ՀՀ ԳԱԱ պատվավոր ակադեմիկոսի դիպլոմ: Ժորես Ալֆյորովը Նոբելյան մրցանակի է արժանացել կիսահաղորդչային հետերկառուցվածքների եւ արագագործ օպտոէլեկտրոնային սարքերի ստեղծման համար: Նա արժանացել է աշխարհի ավելի քան 50 տարբեր գիտակրթական կենտրոնների պատվավոր անդամի կոչման: Հեղինակ է 500 գիտական հոդվածների, 3 մենագրությունների եւ 50 հայտնագործությունների:

Նիստին կմասնակցեն ՀՀ ԳԱԱ-ի ինստիտուտների եւ բուհերի ղեկավարներ, գիտական հասարակայնության ներկայացուցիչներ: Հոկտեմբերի 11-ին ՀՀ ԳԱԱ-ի Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում (Աշտարակ) տեղի ունենալիք «Լազերային ֆիզիկա 2011» միջազգային գիտաժողովում Ժորես Ալֆյորովը հանդես կգա ելույթով: Նույն օրը ակադեմիկոս Ալֆյորովը Հայ-ռուսական սլավոնական համալսարանում կկարդա «21-րդ դարի կիսահաղորդչային հեղափոխություն» 40 րոպեանոց դասախոսությունը:

Նոբելյան մրցանակի դափնեկրի այցելության ծրագրում հանդիպում է նախատեսված ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

Ադրբեջանցիների «արտգալ» վերաբերմունքը Հայաստանի ...

1-ին էջից

Միջադեպի հաջորդ օրը ադրբեջանական աղբյուրներն էլ, ստի ու կեղծիքի հերթական մատուցմամբ, տեղեկացնում էին, թե փոխհրաձգությունից մահացել են երկու ադրբեջանցի զինծառայող, «հայերի կորուստներն էլ ավելի մեծաթիվ են եղել»: Զարմանալու ոչինչ չկա ադրբեջանական կողմի այսպիսի «հրձվանքի մեջ»:

Սակայն զարմանքի տեղիք է տալիս այն, երբ նույն օրն իսկ շփման գծից բավականին հեռու՝ Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում ընթացող Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում ադրբեջանցի պատվիրակները քննարկած դարդ էին անում Հայաստանում ժողովրդավարության խնդիրների լուծված չլինելու մասին: Քննարկվում էր վեհաժողովի նստաշրջանի օրակարգի նախագծով հոկտեմբերի 7-ին նախատեսված Հայաստանում ժողովրդավարական հաստատությունների գործառնման մասին զեկույցը, որին «Ազգը» անդրադարձել է:

Ադրբեջանցի վեհաժողովականները, որպիսիք Հայաստանի մասին զեկույցի քննարկմանը ելույթ ունեցան 6-ը՝ հայաստանյան 4 պատվիրակների հետ, այնպիսի ջերմեռանդությամբ էին խոսում «չկայացած Հայաստանի, ժողովրդավարական բազմաթիվ խնդիրների մեջ ապրող հայ ժողովրդի» անորոշ ապագայի մասին, որ մի պահ կարելի էր կարծել, թե Հայաստանն էլ Թուրքիայի փոքր եղբայր Ադրբեջանի «փոքր եղբայրն» է:

Հայաստանի պատվիրակությունից ելույթ ունեցող Դավիթ Հարությունյանը, Նաիրա Զոհրաբյանն ու Զարուհի Փոստանջյանը որեւէ կերպ չանդրադարձան ադրբեջանական թեմային, իսկ նրանց հետ հերթագայությամբ ելույթ ունեցող ադրբեջանցիների մեղադրանքների ու անհեթեթությունների պատճառով ավելի հանդարտ լինելու ու մեղադրանքներ չհնչեցնելու մի քանի բառ նրանց հաստատագրեց միայն Արմեն Ռուսամյանը, ումից հետո դեռ էլի երեք ադրբեջանցի պիտի խոսեր:

Փաստացի կիսադատարկ դահլիճում ելույթ ունեցող հայ եւ ադրբեջանցի պատգամավորների խոսքից հետո Հայաստանի հարցով համազգեկուցող Զոն Պրեսկոտը նախ հեգնեց, թե մի պահ իրեն թվացել է՝ քննարկումն Ադրբեջանին է վերաբերում: «Լսելով այս մարդկանց Ադրբեջանից, կարելի էր մտածել, թե դա աշխարհում ամենաժողովրդավարական երկիրն է, բայց ես ունեմ մարդու իրավունքների հանձնակատարի զեկույցը, ըստ որի «Արտահայտման, միավորման եւ խաղաղ հավաքների ազատությունը լուրջ խոչընդոտների է բախվում Ադրբեջանում»:

Ակնհայտորեն համբերությունը հատած Պրեսկոտը հնչեցրեց նաեւ քաղաքանտարկյալների իրավիճակի մասին զեկույց պատրաստելու համար ԵԽԽՎ զեկուցողին Ադրբեջան մուտքի արտոնագիր չտալու մասին ադրբեջանական պատվիրակության ղեկավարի արդարանալու փորձերը: Ակնարկելով, որ հայկական հարցի մասին ադրբեջանական ելույթների էներգիան կարող էր իրենց երկրում օգտագործել, Պրեսկոտը շեշտեց. «Կարծում եմ, այլ երկրների ներկայացուցիչները պետք է նախ իրենց նայեն՝ մինչեւ սկսեն դժգոհել»:

Իրավիճակի առնչությամբ դժգոհ արտահայտություններ արեց նաեւ ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի նախագահ Դիկ Մարտին: Դահլիճում ներկա էլի մի քանի վեհաժողովականներ հաստատապես նույն մոտեցումն ունեին: Իսկ ամենավատ հանգամանքը, որ շեշտեց մոնիտորինգի հանձնաժողովի նախագահի պաշտոնը վերջին անգամ զբաղեցնող Դիկ Մարտին, վերաբերում էր կիսադատարկ դահլիճին եւ այն փաստին, որ Հայաստանի մասին զեկույցի քննարկմանը ելույթ ունեցան միայն հայերն ու ադրբեջանցիները:

Երկրների մոնիտորինգի հանդեպ այսպիսի իրավիճակը բնավ էլ ստանդարտ պարադոքս չէ, որ սովորական է ԵԽԽՎ պարագայում: Ուրբաթ օրվա փոխարեն չորեքշաբթի քննարկված Հայաստանի հարցը լավեց բավականին բուռն ու ակտիվ քննարկումներից հետո, որ վերաբերում էին տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպությանը, Եվրոպայի խորհրդի վրա Լիսաբոնի համաձայնագրի ազդեցությանն ու բռնի եւ էքստրեմալ պոռնոգրաֆիային:

«Մեր քաղաքական ղարմն է օգնել, ղաշտպանել եւ ամրապնդել Ռուսաստանը»

Հարցազրույց Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան Արա Աբրահամյանի հետ

1-ին էջից

- Հայերը որպես էթնոս դասվում են հնագույն քաղաքակրթությունների ներկայացուցիչների թվին: Դժվար է աշխարհում գտնել մի պետություն, որտեղ հայ չկա: Ինչո՞վ կարելի է բացատրել այս երեւույթը:

- Իրոք, հայերը հնագույն քաղաքակրթության ներկայացուցիչներ են եւ մեծ մշակույթ կրողներ, մեր պատմությունը բազմահազարամյա ուղի է անցել, կազմած է աստվածաշնչյան Արարատի եւ Նոյյան տապանի առասպելի հետ: Հայ ժողովուրդը կազմավորվել է Հայկական լեռնաշխարհի տարածքում մ.թ.ա. 3-րդից 1-ին հազարամյակներում, իսկ մ.թ.ա. 9-6-րդ դարերում այստեղ գոյություն է ունեցել առաջին հայկական պետությունը՝ Արարատյան թագավորությունը՝ Արարտուն կամ Ուրարտուն: Մենք հին Շումերի եւ Ասորեստանի, Կարթագենի եւ Բաբելոնի, Հռոմեական կայսրության եւ Աքեմենյան տերության ժամանակակիցներն ենք: Բայց այդ ժողովուրդներից ու պետություններից թյունից ուղղափառություն ընդունելու ժամանակաշրջանում: Այն ժամանակ Բյուզանդիան կառավարում էր հայկական Մակեդոնյան գահատոհմը:

Ինչ վերաբերում է Մոսկվայում հայերի հայտնվելուն, արձանագրված է, որ նրանք զգալի ավանդ ունեն Իվան Ահեղի զորքերի կազմում Կազանի գրավման գործում: Հավատարմության դիմաց երախտագիտություն արտահայտելով՝ Իվան Ահեղ ցարը Վասիլի Երանելու տաճարի խորաններից մեկը հանձնել է հայերին ու անվանակոչել ի պատիվ Գրիգոր Լուսավորչի՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցու հիմնադրի եւ Ամենայն հայոց առաջին կաթողիկոսի:

- Ձեր հայրենակիցները վաղնջական ժամանակներից ակտիվորեն մասնակցում են այն պետության քաղաքականությանը, որի տարածքում ապրում են:

- Իրոք, հայերը ծանրակշիռ ավանդ են ներդրել բնակության երկրների զարգացման, դրանց քաղաքականության եւ նույնիսկ համաշխարհային պատմության ընթացքի մեջ, եթե նկատի ունենանք, որ ծագումով հայ է Ալեքսանդր Մակեդոնացին, իսկ կայսրերի հայկական Մակեդոնյան գահատոհմը Բյուզանդիայում կառավարել է 867-1056 թթ.: Հայերը նշանակալի ավանդ են ներդրել Օսմանյան, Պարսկական եւ Ռուսական կայսրությունների զարգացման մեջ, զբաղեցրել պետական եւ զինվորական կարեւոր պաշտոններ: Նրանք միշտ էլ լավ են մերվում բնակության երկրի իրականությանը, հավատարիմ եւ օրինապահ քաղաքացիներ են: Երկրորդ աշխարհամարտի ժամանակաշրջանում ֆրանսիական Դիմադրության շարժումը գլխավորում էր հայ կոմունիստ Միսաք Մանուշյանը: Նույն Ֆրանսիայում վարչապետ է եղել ծագումով հայ Բալադյուրը, իսկ ԱՄՆ-ում մի շարք տարիներ Կալիֆորնիայի նահանգապետ էր ընտրվում Ջորջ Դոմինգեսյանը, Իսրայելում ԱՄՆ դեսպանը եւ պետքարտուղարի տեղակալն էր Էդվարդ Ջերեջյանը: Եվ նման օրինակները շատ են:

Իսկ եթե նկատի ունենանք մեր երկրի փորձը, ռուսական պետության պատմության տարբեր ժամանակաշրջաններում հայերը կարեւոր պաշտոններ են զբաղեցրել իշխանության քաղաքական ու պետական հիերարխիայում: Կայսերական Ռուսաստանում կարելի է նշել ներքգործնախարար, կոմս Միխայել Լորիս-Մելիքովի եւ ժողովրդական լուսավորության նախարար, կոմս Իվան Դելյանովի փորձը: Խորհրդային ժամանակաշրջանում Բաքվի խորհրդի եւ Բաքվի 26 կոմիսարների ղեկավարը նշանավոր Ստեփան Շահումյանն էր: Անաստաս Միկոյանը երկար տարիներ զբաղեցրել է պատասխանատու պետական պաշտոններ, ներառյալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի պաշտոնը: Իվան Թեւոսյանը Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության եւ պաշտպանական արդյունաբերության կազակերպիչներից մեկն էր, ԽՍՀՄ կառավարության փոխնախագահը, մերձմոսկովյան էլեկտրոսալ քաղաքի հիմնադիրը: Լեոնիդ Կոսանդովը ԽՍՀՄ քիմիական արդյունաբերության նախարարն էր եւ Նախարարների խորհրդի փոխնախագահը, Սիմոն Տեր-Պետրոսյանը (Կամո)՝ խորհրդային հետախուզության հիմնադիրներից մեկը:

- Հայերի բնավորության ո՞ր գծերը կառանձնացնեիք:

- Նախ եւ առաջ՝ աշխատասիրությունը, գիտելիքների ձգտումը, ավանդապաշտությունը, հարգանքը մեծերի եւ սերը փոքրերի հանդեպ, ոգեղենությունը, հանդուրժողականությունը, հյուրասիրությունը, ձեռներեցությունը, անհատականությունը, խաղաղասիրությունը, հայրենասիրությունը, անձնվիրությունը եւ կայունությունը: Ազգային խառնվածքի այդ բոլոր հատկանիշներն ու գծերը հայերին թույլ են տվել վերապրել եւ իրենց ազգային ինքնությունը պահպանել կորուստների, ասպատակությունների եւ փորձությունների դարերի հոլովույթում:

Հայաստանի մարտիրոսությունը եւ հայ ժողովրդի տառապանքները հոգեւոր ընտրության, հավատարմության, հաստատակամության եւ անսահման ազատության ճանաչումը դարձան: Հայ ժողովրդի ազատասեր ոգու փայլուն օրինակը դարձավ 451 թ. մայիսի 26-ի Ավարայրի ճակատամարտը պարսիկների դեմ, երբ մեր մեծ սպարապետ Վարդան Մամիկոնյանը մարտից առաջ իր զորքին դիմեց «Հաղթանակ կամ մահ» ոգեշունչ կոչով: Վարդան Մամիկոնյանի օրինակը քանիցս խանդավառել է մեր ժողովրդին եւ ոգի հանել ազգային-ազատագրական պայքարի:

- Ձեր կարծիքով, ինչպիսի՞ միջոցներ պետք է ձեռնարկվեն ազգային փոխհարաբերությունների առումով ռուսաստանյան հասարակությունն առողջացնելու համար:

- Ըստ իս՝ Ռուսաստանում ազգամիջյան հարաբերությունների հարցերը միշտ պետք է մնան իշխանության մարմինների եւ պետական քաղաքականության ուշադրության կենտրոնում: Ռուսաստանը կազմավորվել եւ զարգացել է որպես բազմազգ պետություն, Ռուսաստանի ձեռքբերումների մեջ երկրի ժողովուրդների ավանդը նշանակալի է: Արդի ժամանակաշրջանում բարձրագույն ղեկավարությանն ուժեղ քաղաքական կամք է անհրաժեշտ ազգամիջյան հարաբերությունները ներդաշնակեցնելու համար: Հարկավոր են իշխանության պատասխանատվություն ազգային եւ կրոնական հողի վրա հանցագործությունների եւ իրավախախտումների կասեցման համար, իրավապահ եւ դատական մարմինների պրոֆեսիոնալիզմ, ակտիվ դաստիարակչական եւ հոգեւոր աշխատանք մատաղ սերնդի եւ երիտասարդության հետ, վերջապես՝ լրատվամիջոցներում ազգամիջյան հարաբերությունների զարգացման դինամիկայի կանոնավոր եւ անաչառ լուսաբանում, լուսավորության եւ մշակույթի քարոզչություն:

Թերեւս նպատակահարմար է գործադիր իշխանության մարմիններում ստեղծել ազգամիջյան հարաբերությունների ոլորտի նոր ինստիտուցիոնալ մեխանիզմ: Ռուսաստանի հայերի միությունը այս կապակցությամբ որոշակի առաջարկություններ ներկայացրել եւ քննարկել է տարբեր համաժողովներում, ներառյալ նաեւ մամուլում: Մենք նպատակահարմար ենք գտնում ՌԴ նախագահին առընթեր ազգությունների գործերի խորհրդատվական մարմնի՝ խորհրդի (կամ կոմիտեի, հանձնաժողովի) ստեղծումը, Դաշնային ժողովին ՌԴ նախագահի ամենամյա ուղերձում այնպիսի բաժնի (մասի) ներառումը, որը կառնչվեր ազգամիջյան հարաբերությունների վիճակին եւ զարգացման դինամիկային, տվյալ ոլորտի առաջարկություններին:

- Դուք Ռուսաստանի հայերի միության նախագահն եք: Պատմեցեք կազմակերպության հիմնական խնդիրների մասին:

- Ռուսաստանի հայերի միությունը ստեղծվեց 2000 թ. եւ ավելի քան 2 մլն մարդու միավորող ամենամեծ հայ համայնքի հիմնական դաշնային հասարակական կազմակերպությունն է: Դաշնության փաստորեն բոլոր սուբյեկտներում ունենք մեր տարածաշրջանային եւ տեղական բաժանմունքները: Մեր կազմակերպության ձեւավորումը դարձավ Ռուսաստանում ԽՍՀՄ փլուզումից հետո դիտվող քաղաքական գործընթացների օբյեկտիվ հետեւանքը: ՌՀՄ-ի խնդիրները կապված են հայերի ազգամշակութային ինքնության, լեզվի եւ ինքնօրինակության պահպանման հետ, երկրի տարածաշրջաններում մեր համայնքներին, հեխխորհրդային տարածքի բազմաթիվ հարկադիր վերաբնակներին եւ աշխատանքային միգրանտներին հասարակական օգնություն ցուցաբերելու, քաղաքացիական հասարակության կառուցման, ժողովրդավարության զարգացման եւ ռուսական պետության հիմքերի ամրապնդման գործին ակտիվորեն մասնակցելու հետ, ինչպես նաեւ ռուս-հայկական բազմակողմանի հարաբերությունների խորացման, բարեշաբերը իրենց պատմական ուղին ընդհատեցին արտաքին հարձակումների, ավերածությունների ու կործանումների հետեւանքով: Հայերն ու Հայաստանը կորցնում էին պետականությունը եւ էթնիկական տարածքները, բայց որոշ ժամանակ անց վերածնվում էին եւ պահպանվում են մինչեւ օրս:

Այն հանգամանքը, որ հայերն այսօր ներկայացված են եւ ապրում են աշխարհի բազմաթիվ երկրներում, մեր պատմության հետեւանքն է: Բայց 19-20-րդ դարերի սահմանագծին իրենց պատմական հայրենիքից հայերի զանգվածային արտահոսքի ամենագլխավոր պատճառը Օսմանյան կայսրությունում ցեղասպանության ոճիրն է, ինչպես նաեւ Առաջին աշխարհամարտի եւ բոլշեւիկա-ֆեմալական համաձայնության քաղաքական-իրավական արդյունքը, որի հետեւանքով ավելի քան 2 մլն հայ բնաջնջվեց Հայաստանի Արեւմտյան (թուրքական) եւ Արեւելյան (ռուսական) մասերում, պատմական Հայաստանի մեծ մասը դուրս մնաց Անկախ, ապա նաեւ Խորհրդային Հայաստանի սահմաններից, իսկ թուրքական յաթաղանից հրաշքով փրկված հայերը սփռված եղան ապաստան փնտրել Արեւմուտքի եւ Արեւելքի տարբեր երկրներում:

Այսօր աշխարհի 80 երկրում ապրում է ավելի քան 11 մլն հայ, նրանցից միայն 3,5 միլիոնն է ապրում Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում: Տարբեր երկրների հայկական գաղթօջախները Հայաստանի հետ հոգեւոր, մշակութային եւ էթնիկական կապերով կապված հայաշխարհի կղզիներն են, համաշխարհային հայության բաղկացուցիչ մասերը:

- Հայերը ե՞րբ են հայտնվել Մոսկվայում:

- Եթե խոսենք հայ-ռուսական հարաբերությունների պատմության մասին, դրանք սկզբնավորվել են հին ռուսական պետության՝ Կիեւյան Ռուսիայի կազմավորման եւ մեծ իշխան Վլադիմիր Սվյատոսլավիչի կողմից 988 թ. Բյուզանդական կայսրությունից ուղղափառություն ընդունելու ժամանակաշրջանում: Այն ժամանակ Բյուզանդիան կառավարում էր հայկական Մակեդոնյան գահատոհմը:

Ինչ վերաբերում է Մոսկվայում հայերի հայտնվելուն, արձանագրված է, որ նրանք զգալի ավանդ ունեն Իվան Ահեղի զորքերի կազմում Կազանի գրավման գործում: Հավատարմության դիմաց երախտագիտություն արտահայտելով՝ Իվան Ահեղ ցարը Վասիլի Երանելու տաճարի խորաններից մեկը հանձնել է հայերին ու անվանակոչել ի պատիվ Գրիգոր Լուսավորչի՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցու հիմնադրի եւ Ամենայն հայոց առաջին կաթողիկոսի:

- Ձեր հայրենակիցները վաղնջական ժամանակներից ակտիվորեն մասնակցում են այն պետության քաղաքականությանը, որի տարածքում ապրում են:

- Իրոք, հայերը ծանրակշիռ ավանդ են ներդրել բնակության երկրների զարգացման, դրանց քաղաքականության եւ նույնիսկ համաշխարհային պատմության ընթացքի մեջ, եթե նկատի ունենանք, որ ծագումով հայ է Ալեքսանդր Մակեդոնացին, իսկ կայսրերի հայկական Մակեդոնյան գահատոհմը Բյուզանդիայում կառավարել է 867-1056 թթ.: Հայերը նշանակալի ավանդ են ներդրել Օսմանյան, Պարսկական եւ Ռուսական կայսրությունների զարգացման մեջ, զբաղեցրել պետական եւ զինվորական կարեւոր պաշտոններ: Նրանք միշտ էլ լավ են մերվում բնակության երկրի իրականությանը, հավատարիմ եւ օրինապահ քաղաքացիներ են: Երկրորդ աշխարհամարտի ժամանակաշրջանում ֆրանսիական Դիմադրության շարժումը գլխավորում էր հայ կոմունիստ Միսաք Մանուշյանը: Նույն Ֆրանսիայում վարչապետ է եղել ծագումով հայ Բալադյուրը, իսկ ԱՄՆ-ում մի շարք տարիներ Կալիֆորնիայի նահանգապետ էր ընտրվում Ջորջ Դոմինգեսյանը, Իսրայելում ԱՄՆ դեսպանը եւ պետքարտուղարի տեղակալն էր Էդվարդ Ջերեջյանը: Եվ նման օրինակները շատ են:

Իսկ եթե նկատի ունենանք մեր երկրի փորձը, ռուսական պետության պատմության տարբեր ժամանակաշրջաններում հայերը կարեւոր պաշտոններ են զբաղեցրել իշխանության քաղաքական ու պետական հիերարխիայում: Կայսերական Ռուսաստանում կարելի է նշել ներքգործնախարար, կոմս Միխայել Լորիս-Մելիքովի եւ ժողովրդական լուսավորության նախարար, կոմս Իվան Դելյանովի փորձը: Խորհրդային ժամանակաշրջանում Բաքվի խորհրդի եւ Բաքվի 26 կոմիսարների ղեկավարը նշանավոր Ստեփան Շահումյանն էր: Անաստաս Միկոյանը երկար տարիներ զբաղեցրել է պատասխանատու պետական պաշտոններ, ներառյալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի պաշտոնը: Իվան Թեւոսյանը Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության եւ պաշտպանական արդյունաբերության կազակերպիչներից մեկն էր, ԽՍՀՄ կառավարության փոխնախագահը, մերձմոսկովյան էլեկտրոսալ քաղաքի հիմնադիրը: Լեոնիդ Կոսանդովը ԽՍՀՄ քիմիական արդյունաբերության նախարարն էր եւ Նախարարների խորհրդի փոխնախագահը, Սիմոն Տեր-Պետրոսյանը (Կամո)՝ խորհրդային հետախուզության հիմնադիրներից մեկը:

- Հայերի բնավորության ո՞ր գծերը կառանձնացնեիք:

- Նախ եւ առաջ՝ աշխատասիրությունը, գիտելիքների ձգտումը, ավանդապաշտությունը, հարգանքը մեծերի եւ սերը փոքրերի հանդեպ, ոգեղենությունը, հանդուրժողականությունը, հյուրասիրությունը, ձեռներեցությունը, անհատականությունը, խաղաղասիրությունը, հայրենասիրությունը, անձնվիրությունը եւ կայունությունը: Ազգային խառնվածքի այդ բոլոր հատկանիշներն ու գծերը հայերին թույլ են տվել վերապրել եւ իրենց ազգային ինքնությունը պահպանել կորուստների, ասպատակությունների եւ փորձությունների դարերի հոլովույթում:

Հայաստանի մարտիրոսությունը եւ հայ ժողովրդի տառապանքները հոգեւոր ընտրության, հավատարմության, հաստատակամության եւ անսահման ազատության ճանաչումը դարձան: Հայ ժողովրդի ազատասեր ոգու փայլուն օրինակը դարձավ 451 թ. մայիսի 26-ի Ավարայրի ճակատամարտը պարսիկների դեմ, երբ մեր մեծ սպարապետ Վարդան Մամիկոնյանը մարտից առաջ իր զորքին դիմեց «Հաղթանակ կամ մահ» ոգեշունչ կոչով: Վարդան Մամիկոնյանի օրինակը քանիցս խանդավառել է մեր ժողովրդին եւ ոգի հանել ազգային-ազատագրական պայքարի:

- Ձեր կարծիքով, ինչպիսի՞ միջոցներ պետք է ձեռնարկվեն ազգային փոխհարաբերությունների առումով ռուսաստանյան հասարակությունն առողջացնելու համար:

- Ըստ իս՝ Ռուսաստանում ազգամիջյան հարաբերությունների հարցերը միշտ պետք է մնան իշխանության մարմինների եւ պետական քաղաքականության ուշադրության կենտրոնում: Ռուսաստանը կազմավորվել եւ զարգացել է որպես բազմազգ պետություն, Ռուսաստանի ձեռքբերումների մեջ երկրի ժողովուրդների ավանդը նշանակալի է: Արդի ժամանակաշրջանում բարձրագույն ղեկավարությանն ուժեղ քաղաքական կամք է անհրաժեշտ ազգամիջյան հարաբերությունները ներդաշնակեցնելու համար: Հարկավոր են իշխանության պատասխանատվություն ազգային եւ կրոնական հողի վրա հանցագործությունների եւ իրավախախտումների կասեցման համար, իրավապահ եւ դատական մարմինների պրոֆեսիոնալիզմ, ակտիվ դաստիարակչական եւ հոգեւոր աշխատանք մատաղ սերնդի եւ երիտասարդության հետ, վերջապես՝ լրատվամիջոցներում ազգամիջյան հարաբերությունների զարգացման դինամիկայի կանոնավոր եւ անաչառ լուսաբանում, լուսավորության եւ մշակույթի քարոզչություն:

Թերեւս նպատակահարմար է գործադիր իշխանության մարմիններում ստեղծել ազգամիջյան հարաբերությունների ոլորտի նոր ինստիտուցիոնալ մեխանիզմ: Ռուսաստանի հայերի միությունը այս կապակցությամբ որոշակի առաջարկություններ ներկայացրել եւ քննարկել է տարբեր համաժողովներում, ներառյալ նաեւ մամուլում: Մենք նպատակահարմար ենք գտնում ՌԴ նախագահին առընթեր ազգությունների գործերի խորհրդատվական մարմնի՝ խորհրդի (կամ կոմիտեի, հանձնաժողովի) ստեղծումը, Դաշնային ժողովին ՌԴ նախագահի ամենամյա ուղերձում այնպիսի բաժնի (մասի) ներառումը, որը կառնչվեր ազգամիջյան հարաբերությունների վիճակին եւ զարգացման դինամիկային, տվյալ ոլորտի առաջարկություններին:

- Դուք Ռուսաստանի հայերի միության նախագահն եք: Պատմեցեք կազմակերպության հիմնական խնդիրների մասին:

- Ռուսաստանի հայերի միությունը ստեղծվեց 2000 թ. եւ ավելի քան 2 մլն մարդու միավորող ամենամեծ հայ համայնքի հիմնական դաշնային հասարակական կազմակերպությունն է: Դաշնության փաստորեն բոլոր սուբյեկտներում ունենք մեր տարածաշրջանային եւ տեղական բաժանմունքները: Մեր կազմակերպության ձեւավորումը դարձավ Ռուսաստանում ԽՍՀՄ փլուզումից հետո դիտվող քաղաքական գործընթացների օբյեկտիվ հետեւանքը: ՌՀՄ-ի խնդիրները կապված են հայերի ազգամշակութային ինքնության, լեզվի եւ ինքնօրինակության պահպանման հետ, երկրի տարածաշրջաններում մեր համայնքներին, հեխխորհրդային տարածքի բազմաթիվ հարկադիր վերաբնակներին եւ աշխատանքային միգրանտներին հասարակական օգնություն ցուցաբերելու, քաղաքացիական հասարակության կառուցման, ժողովրդավարության զարգացման եւ ռուսական պետության հիմքերի ամրապնդման գործին ակտիվորեն մասնակցելու հետ, ինչպես նաեւ ռուս-հայկական բազմակողմանի հարաբերությունների խորացման, բարեկամության ու համագործակցության պատմական ավանդույթների վրա հիմնված Ռուսաստան-Հայաստան ռազմավարական դաշինքի ամրապնդման օգտին հայերի ներուժի ու ջանքերի միավորման հետ:

Մեր միությունը մեծ ուշադրություն է դարձնում ինչպես ազգամիջյան հարաբերությունների ներդաշնակեցման եւ հասարակության մեջ քաղաքացիական հաշտության ու համաձայնության ամրապնդման հարցերին, այնպես էլ երիտասարդության արդի խնդիրներին, վեհ հայրենասիրության եւ հանդուրժողականության դաստիարակմանը: Մենք նոր հարթակներ ենք ստեղծում ռուսաստանյան երիտասարդության զարգացման հրաշալի հարցերի քննարկման համար, հոգում ենք երիտասարդ սերնդի մասին, քանի որ երիտասարդությունը մեր ապագան է:

Այսօր ՌՀՄ-ն Համառուսաստանյան ժողովրդական ճակատի մասնակիցներից մեկն է: Մեզ դիմում են, մեզ հավատում են, եւ դա մեծ պատասխանատվություն է: Մենք Ռուսաստանը ընկալում ենք որպես սեփական հայրենիք. նա մեր տունն է, քանի որ մենք այստեղ ապրում, աշխատում ենք, ընտանիքներ կազմում, երեխաներ մեծացնում, քանի որ խոսում ենք ռուսերեն, քանի որ Ռուսաստանը Հայաստանի մեծ բարեկամն է ու դաշնակիցը:

Առիթից օգտվելով՝ շնորհավորում եմ բոլոր հայերին Հայաստանի անկախության օրվա առթիվ, որի 20-ամյակը մենք նշեցինք սեպտեմբերի 21-ին: Հայաստանի անկախությունը բարձրագույն համազգային արժեք է, մեր ժողովրդի բազմաթիվ սերունդների պատմական երազանքը: Արդի Հայաստանը ապագային միտված ժողովրդավարական պետություն է: Ես Հայաստանի ժողովրդին մաղթում եմ առողջություն, բարգավաճում եւ նոր հաջողություններ ի նպաստ երկրի:

ՄԱՐԻ ՕՐՈՆՏ

«Մոսկովսկայա պրավդա»

թարգմ. Պ. Ք.

Նախագահ Սարկոզիի Հայաստան այցը ներխուժո՞ւմ է Թուրքիայի հետնաբակ

Թե՞ թուրքական թերթերը նորից չափն անցնում են

Երեկ, ավարտելով Հայաստան կատարած երկօրյա պետական այցը, Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Նիկոլա Սարկոզին Երևանից ուղևորվեց Բաքու, որտեղից անցավ Թբիլիսի եւ վերադարձավ հայրենիք: Այցի առաջին օրը նախագահ Սարկոզին եղավ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիպեց Վեհափառ հայրապետին, ապա Ծիծեռնակաբերդում ծաղկեպսակ դրեց Մեծ եղեռնի հուշարձանին, երեկոյան զբոսնեց Հանրապետության հրապարակում, իսկ հաջորդ օրը Ֆրանսիայի հրապարակում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ բացեց Ռոդենի արձանը:

Նիկոլա Սարկոզիի Հայաստան այցելությունը պատմական էր, լայն արձագանք գտավ նաեւ Թուրքիայում: Այցին անդրադարձան թուրքական հանրային հեռուստատեսությունը, այլ հեռուստաընկերություններ եւ լրատվական գործակալություններ, ինչպես նաեւ էլեկտրոնային ու տպագիր մամուլը: Դրանց խնդիրը, սակայն, ոչ թե այցելության բնույթն էր, այլ Ֆրանսիայի նախագահի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման մասին Թուրքիային հասցեագրած հսկայական ուղերձներն էին:

Թուրքական թերթերը, գրեթե առանց բացառության, նշել են, որ սա պատասխան այց է, որի ընթացքում «Ֆրանսիայի նախագահը այցելեց, այսպես կոչված, ցեղասպանության հուշարձան», «15-ի իրադարձությունները բնութագրեց որպես ցեղասպանություն, եւ Երեւանից դիմելով Թուրքիային՝ պահանջեց առերեսվել 1915-ի իրադարձությունների հետ եւ ունենալ այդ իրադարձությունները իբրեւ ցեղասպանություն բնութագրելու համարձակություն»:

Այս ամենի մասին գրելիս դրանք իրենց պարտքն են համարում թուրք ընթերցողին հիշեցնել, որ Ֆրանսիայում մոտենում են նախագահական ընտրությունները, երկրում Սարկոզին այլեւս ժողովրդականություն չի վայելում, հետեւաբար նրա Հայաստան այցելությունը, ցեղասպանության ճանաչման մասին արտահայտությունները պետք է վերագրել Ֆրանսիայի հայկական լոբբիին սիրաշահելու դրսեւորումներին, իհարկե, առանց նշելու թուրքական լոբբիի եւ ֆրանսաբնակ թուրքերի մասին, որոնք թվաքանակով գրեթե չեն զիջում ֆրանսահայերին:

Ի դեպ, հոկտեմբերի 6-ին, նախքան Ֆրանսիայի նախագահի ժամանումը Երեւան, նրա այցին թուրքական «Դունիա բյուլթենի» լրատվական գործակալությունը անդրադարձել էր «Սարկոզին դեսանտ է իջեցնում Հայաստան», իսկ «Աֆշամ» թերթը՝ «Սարկոզին ասաց. սա ցեղասպանություն է» վերնագրերով: Մինչ այդ, հոկտեմբերի 4-ին այցին անդրադարձել էր գերմանական «Դոյչե վելլեն»:

Երեկվա համարներում արդեն թուրքական թերթերից «Սաբահը» Ֆրանսիայի նախագահի այցը լուսաբանեց «Սարկոզին մուտք է գործում մեր հետնաբակը», «Ենի շաֆաքը»՝ «Սարկոն նորից գրավ է դնում Հայաստանի վրա», «Յուրիեթը»՝ «Սարկոզին Երեւանից դիմեց Թուրքիային», «Մուհալիֆ գազեթեն»՝ «Սարկոզին սպառնաց Թուրքիային», «Գյունեշն» ու «Գերչեք գյոնդեմը»՝ «Սա ցեղասպանություն է», «Իհլաս» հեռուստալիքը կայքէջում՝ «Սարկոզին նորից չափն անցավ», իսկ Եվրասիական ուսումնասիրությունների կենտրոնի կայքէջը՝ «Ոչ մի երկիր այնքան լավ չի կարող հասկանալ Լեռնային Ղարաբաղի նշանակությունը Հայաստանի համար, որքան Ֆրանսիան» վերնագրերով:

Կարծում ենք այս վերնագրերը հսկայական պատկերացում են տալիս նախագահ Սարկոզիի Հայաստան այցելության թուրքական արձագանքների մասին, ուստի եւ ավելորդ են մանրամասները:

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Չավես-Սեչին հանդիպում Վենեսուելայում

Մոսկվան փորձում է կանխել ֆինանսական կորուստները

Ռուսաստանը շտապ միջոցներ է ձեռնարկում Վենեսուելայում ստեղծված վտանգավոր իրադրության կապակցությամբ: Վարչապետ Վլադիմիր Պուտինի կարգադրությամբ Կարակաս է մեկնել փոխվարչապետ Իգոր Սեչինը, որը զբաղվում է Լատինական Ամերիկայի հետ Մոսկվայի հարաբերություններով: Այս շտապողականության պատճառը նախագահ Ուգո Չավեսի՝ տարածաշրջանում Ռուսաստանի «գլխավոր բարեկամի» հիվանդությունն է, նշում է մոսկովյան «Կոմերսանտ» թերթը: Եթե խաղցկեղով հիվանդ Չավեսը մահանա կամ թողնի պաշտոնը՝ տեղը զիջելով ընդդիմադիրներին, ապա Ռուսաստանը միլիարդների կորուստներ կունենա:

Երեկ Չավեսը եւ Սեչինը հանդիպում են ունեցել Կարակասի «Միրաֆլորես» նախագահական պալատում: «Ռոյթեր» գործակալությունը հաղորդում է, որ ստորագրվել է պայմանագիր, ըստ որի՝ Ռուսաստանը Վենեսուելային 4 միլիարդ դոլար վարկ է հատկացնելու: Չավեսի խոսքերով, 2 միլիարդը կհատկացվի 2012-ին, մնացյալ 2 միլիարդը՝ մեկ տարի անց:

Բացի դրանից, այցելության ընթացքում ստորագրվել է պայմանագիր ռուս-վենեսուելական բանանային ընկերության ստեղծման մասին: Վենեսուելան նաեւ մտադիր է ծաղիկներ արտահանել Ռուսաստան:

Հոկտեմբերի կեսերին Չավեսը բուժզննության նպատակով հերթական անգամ մեկնելու է Կուբա: Ռուսաստանն առայժմ չի հրաժարվում Վենեսուելայում նոր նախագծերի իրականացումից եւ շարունակում է պաշտպանել Ուգո Չավեսին:

Թեեւ արտաքուստ Չավեսն իրեն առողջ է ցույց տալիս, բայց Մոսկվայում անչափ մտահոգ են նրա առողջական վիճակի կապակցությամբ: «Վենեսուելայում մեր նախագծերն իրականացվում են Չավեսի ակտիվ աջակցությամբ: Ուզում ենք հավատալ, որ նա կհաղթահարի հիվանդությունը՝ թեեւ ելքը անկանխատեսելի է», հայտարարել է ՌԴ կառավարության աղբյուրներից մեկը:

Վենեսուելան Հնդկաստանից հետո 2-րդ տեղն է զբաղեցնում ռուսական զինատեսակների գնումների գծով: Պատվերների գումարը գնահատվում է 6-7 միլիարդ դոլար: Ի դեպ, Կարակասը զենքի դիմաց մասամբ վճարում է ռուսական փողերով. 2009-ին Մոսկվան Վենեսուելային 2,2 միլիարդ դոլար հատկացրեց Աբխազիայի եւ Հարավային Օսիայի ճանաչումից հետո: Եթե Չավեսը հեռանա քաղաքական ասպարեզից կամ մահանա, ապա Ռուսաստանը ոչ միայն չի ստանա նոր պատվերներ, այլեւ կարող է զրկվել արդեն մատակարարված զենքի դիմաց հասանելիք վճարումներից:

FBI

Ռ. Մյուլլեր. «ԱՄՆ-ի համար գլխավոր վտանգը ՉԺՀ լրտեսությունն է»

Հետաքննությունների դաշնային բյուրոյի (ՀԴԲ) տնօրեն Ռոբերտ Մյուլլերը Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի հետախուզության հանձնախմբի առջեւ ունեցած ելույթում հայտարարել է, որ իր գերատեսչության գործունեության առաջնային ուղղություններից մեկը դարձել է պայքարը կիբեռլրտեսության դեմ: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Մյուլլերի խոսքերով, ԱՄՆ-ի անվտանգության համար ամենամեծ սպառնալիքը լրտեսությունն է, այդ թվում՝ ՉԺՀ տնտեսական լրտեսությունը: ՀԴԲ-ի տնօրենը տեղեկացրել է, որ 2006 թվականից մինչեւ օրս իր գերատեսչության գործակալները հետաքննել են Չինաստանի օգտին լրտեսությամբ զբաղվող անձանց տասնյակ գործեր:

Անցյալում պաշտոնական Պեկինը քանիցս ժխտել էր իր մասնակցությունը ամերիկյան կառավարական հիմնարկների եւ ընկերությունների (մասնավորապես՝ Google-ի) դեմ կազմակերպված կիբեռնետիկական գրոհներին:

Մյուլլերը նաեւ նախազգուշացրել է, որ հակավոր է հաշվի առնել Ռուսաստանի, «թերեւս նաեւ Իրանի» հետ կապված վտանգը: ՀԴԲ տնօրենն ընդգծել է, որ կիբեռգրոհները սպառնում են ինչպես զինվորական եւ մյուս գերատեսչություններին, այնպես էլ ֆինանսական ու հեռահաղորդակցական հաստվածին եւ այլ կարեւոր կառույցների:

CNN-ը հաղորդում է, որ Մյուլլերն իր ելույթում նաեւ հիշեցրել է, որ «Ալ Ղաիդայի» Արաբական թերակղզու մասնաճյուղը շարունակում է նշանակալի վտանգ ներկայացնել ԱՄՆ-ի համար, չնայած դրա առաջնորդ Անվար ալ Ավլակիի սպանությանը: Մյուլլերը կարծում է, որ այդ ահաբեկչական խմբավորումը դեռ բավականաչափ հնարավորություններ ունի, որպեսզի ռումբեր ստեղծի եւ դրանք հասցնի ԱՄՆ տարածք:

Ֆրանսիայի հրեական համայնքը խնդադատում է Սարկոզիին

Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին խիստ քննադատության է ենթարկվել պաղեստինա-իսրայելական հակամարտության վերաբերյալ օրերս արած հայտարարության կապակցությամբ, հաղորդում է «Քոլ Իսրայել» ռադիոկայանը:

Որպես իսրայելցիների բարեկամ հանդես եկող Սարկոզին Նյու Յորքից՝ ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովից վերադառնալուց հետո հայտարարել էր, թե հրեական պետության մասին խոսելը եւ պաղեստինցիների կողմից դրա ճանաչումը պահանջելը հիմարություն են, քանի որ Իսրայելում առնվազն 2 միլիոն արաբ է ապրում: Ըստ Սարկոզիի, «հրեական պետություն» բնորոշումը նույնքան տրամաբանական է, որքան, ասենք, «կաթոլիկական սեղանը»:

Le Canard Enchainé երգիծական շաբաթաթերթին տված հարցազրույցում Սարկոզին մերձավորարեւելյան հաշտության բանակցությունների ձախողման մեղքը բարդել էր վարչապետ Բենիամին Նաթանյահուի վրա, որը հաստատել էր «Երուսաղեմի արաբական մասում» հրեաների 1100 բնակարանի կառուցման ծրագիրը: Սարկոզին ասել էր, որ Նաթանյահուն համաշխարհային հանրությանը հիասթափեցնելու առիթը երբեք բաց չի թողնում, մինչդեռ Աբբասը «պետական այր է»:

Այս հայտարարությունները զայրացրել են Ֆրանսիայի հրեական համայնքին եւ դրա առաջնորդ Ռիշար Պրասկիեին: Ուստի Սարկոզին հանդես է եկել պարզաբանումներով, պնդելով, որ ինքը կողմ է «երկու պետություն երկու ժողովրդի համար» սկզբունքին, ինչը ենթադրում է Իսրայելի ճանաչում որպես հրեաների ազգային օջախ:

Քադդաֆին ԱԱԽ-ի դեմ խաղաղ պայքարի կոչ է անում

Լիբիայի նախկին ղեկավար, գնդապետ Մուամմար Քադդաֆին անձնատուր չի լինում: Սիրիական «Ար-Ռայ» հեռուստալիքով երեկ տարածվել է նրա ձայնագրված ելույթը, որտեղ նա իր կողմնակիցներին կոչ է անում պայքարել Լիբիայի նոր իշխանությունների դեմ:

Քադդաֆիի խոսքերով, Անցումային ազգային խորհուրդը լիբիացիների կյանքը դարձրել է «անտանելի»: Գնդապետն ասում է, որ բողոքի ելույթները պետք է խաղաղ բնույթ կրեն՝ չնայած ԱԱԽ-ն երկրի օրինական իշխանությունը չէ:

Իր ելույթում Քադդաֆին դիմում է նաեւ նոր զարգացող այն երկրների ղեկավարներին, որոնք պաշտոնապես ճանաչել են Լիբիայի նոր իշխանություններին: Գնդապետը նախազգուշացնում է, որ նրանք եւս կարող են արժանանալ նույն բախտին, այսինքն՝ կարող են իշխանությունից հեռացվել օտարերկրյա միջամտությամբ:

Մշակույթ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿ

Սարկոզիի թանկագին նվերը Երեւանին

Ժյուլ Բաստիեն Լրպաժի բրոնզե արձանը, 1889 թ.

Պարամետրեր՝ 175 x 89 x 85սմ

Հուշարձանի հեղինակ Ռոդենը, որ ֆրանսիացի բնանկարիչ Ժյուլ Բաստիեն Լրպաժին հանդիպել էր դեռեւս 1881թ., ձուլեց այս ականավոր արվեստագետի բրոնզե արձանը 1889թ.՝ որպես հիմք օգտագործելով վերջինիս լուսանկարները: Ինչպես իր մյուս բրոնզե արձանների դեպքում, այս անգամ նույնպես Ռոդենը հերոսին ներկայացրել է շարժման մեջ՝ ներկայանկը եւ վրձինը ձեռքին: Ռոդենը ցանկանում էր, որպեսզի այն լիովին մարմնավորի Ժյուլ Բաստիեն Լրպաժ արվեստագետի կերպարը: 1889թ. մամուլում տեղ գտած մի հոդվածում ասվում է. «Սա ոգեշնչված մարդու մտքի իսկական թռիչք է, անհատի եւ նրա արվեստի մարմնավորում»: Նույն թվականին այս բրոնզաձույլ արձանն իր տեղը գտավ Փարիզում կայացած Մոնեի եւ Ռոդենի աշխատանքների՝ «Բաստիեն Լրպաժը բաց երկնքի տակ» խորագիրը կրող համատեղ ցուցահանդեսում: Հուշարձանը կանգնեցվել է 1889թ. սեպտեմբերի 29-ին Դամվիլիե քաղաքամիջ ավանից դուրս՝ դաշտամերձ մի վայրում: Արձանի տեղադրման այս ընտրությունը հանրային վայրերում կանգնեցվող նմանատիպ հուշարձանների նկատմամբ Ռոդենի նոր մոտեցման հավաստումն էր. այն է՝ ներկայացնել անհատի կերպարը ժեստերի, վերաբերմունքի եւ նույնիսկ տեղադրման վայրի միջոցով, ինչպես որ այս հուշարձանի դեպքում է:

Orange Armenia

Մարկոս Գրիգորյանը արժանի էր այլ գնահատանքի

Իրանահայ արվեստագետ, արվեստի մեծ գիտակ ու հավաքորդ Մարկոս Գրիգորյանի ստեղծագործական ուղուն «**Ազգը**» բազմիցս անդրադարձել է թե՛ իր կենդանության, թե՛ մահվանից հետո: Արվեստի նվիրյալ Մարկոս Գրիգորյանը չորս տարի առաջ իր տանը թաքարկվեց կողոպտիչների ծեծին, որի հետեւանքով էլ մահկանացուն կնքեց հիվանդանոցում: Չնայած որ նա իր հավաքածուն նվիրել էր Հայաստանին եւ ցուցադրվում էր Չարենցի անվ. գրականության թանգարանի երկու սրահներում ժամանակավորապես, առայսօր էլ չի լուծվել Մարկոսի թանգարանի հարցը, որը շուրջ 10 տարի է, ինչ ձգձգվում է:

Երբ «**Ազգը**» սկսեցինք հրավեր մասնակցելու Մ. Գրիգորյանին նվիրված «Որպեսզի չուշանանք...» տեսաֆիլմի շնորհանդեսին եւ ասուլիսին, սիրով մասնակցեցինք: Սակայն կազմակերպիչները 30 րոպե ուշացումով, եւ միայն լրագրողների պահանջով սկսեցին ասուլիսը: Ներկա արվեստագետներն ու Մ. Գրիգորյանին ճանաչողները մեկ անգամ եւս անդրադարձան նրա արժեքավոր ստեղծագործություններին ու նաեւ կարեւոր հավաքածուներին: Թանգարանի տնօրեն Կարո Վարդանյանը հուսադրեց, որ թանգարանի վերանորոգումը ավարտվելուց հետո «Միջին Արեւելքի թանգարանը» կգործի այնքան ժամանակ մինչեւ կլուծվի Մարկոս Գրիգորյանի առանձին թանգարանի հարցը:

Քիչ անց ներկաներին հրավիրեցին կինոսրահ մասնակցելու Մարկոս Գրիգորյանին նվիրված «Որպեսզի չուշանանք...» տեսաֆիլմի շնորհանդեսին: Ցավալի էր, որ ներկա տեխնիկայի դարում, երբ հնարավոր է մեկ կամ երկու կոճակ սեղմելով ֆիլմը նորմալ մատուցել, այդպես չեղավ: Չորս անգամ ֆիլմը սկսվեց, մի քանի րոպե անց, նորից ընդհատվեց, նորից սկսվեց: Նման անփույթ վերաբերմունք էր նաեւ ֆիլմում՝ տեխնիկական խոսանոցով, Մարկոսի մասին կցկտուր ինֆորմացիայով եւ էլի շատ թերություններով: Մի խոսքով՝ ոչ թե ուրախալի էր երիտասարդ աղջիկների նախաձեռնությունը, այլ շատ վիրավորական, քանզի հետագա սերունդներին այդ կերպ չէ, որ պետք է ներկայացնեն արվեստի նվիրյալ, Իրանի ժամանակակից արվեստի հիմնադիրներից մեկին՝ Մարկոս Գրիգորյանին:

Հուսանք, որ հետագայում, ովքեր փորձ կանեն տեսաֆիլմ նկարահանել որեւէ արվեստագետի մասին, լրջագույնս կուսումնասիրեն նյութը եւ մատուցման տեխնիկան, որպեսզի մարդիկ դահլիճից դուրս չգան վրդովված, ինչը եղավ այս դեպքում: Մարկոս Գրիգորյանը նման «գնահատանքի» արժանի չէր:

Մ. Մ.

«Հարյուր ու մեկ հայրենը» գրքի շնորհանդես Վրաստանում

Հոկտեմբերի 6-ին Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարությունում կայացավ Վրաստանի ճանաչված մշակութային գործիչ, թարգմանիչ եւ արձակագիր Գիվի Շահնազարի՝ հայ միջնադարյան բանաստեղծ Նահապետ Քուչակի «Հարյուր ու մեկ հայրենը» գրքի վրացերեն թարգմանության շնորհանդեսը:

Գիրքը ներկայացրել է Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարար Նիկոլոզ Ռուրուան:

Միջոցառմանը մասնակցում էր ՀՀ դեսպան Հովհաննես Մանուկյանը:

Վանաձորի Հովհ. Աբելյանի թատրոնը նշում է 80-ամյակը

Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնը հիմնադրվել է 1931-ին Յանովսկու «Ցասում» բեմադրությամբ, որի բեմադրիչ Աշոտ Մաթեւոսյանի ջանքերի ու մի խումբ արվեստի նվիրյալների համագործակցությամբ: Թատրոնի առաջին խանամյակը կարեւորվել է մի շարք բեմադրություններով եւ անվանի դերասաններ Հովհաննես Աբելյանի, Վահրամ Փափազյանի, Հրաչյա Ներսիսյանի, Արուս Ոսկանյանի, Ժաստենի հյուրախաղերով: Մինչեւ մահը՝ 1936 թիվը, Հովհաննես Աբելյանը գրեթե ամեն տարի թատրոնում խաղացել է բոլոր լավագույն դերերը՝ Շեխպիրյան ու Շիրվանզադեի խաղացանկերում եւ հանդիսացել ուսուցիչ երիտասարդ դերասանների համար: Ի հարգանս, նրա մահից հետո Վանաձորի թատրոնը անվանվել է Հովհաննես Աբելյանի անունով, իսկ հետո արժանացել նաեւ պետական թատրոնի պատվավոր կոչման: Թատրոնի կենսագրական էջերից է եղել առաջին 20-ամյակը՝ առաջին հյուրախաղերը Մոսկվա երկու ներկայացումներով: Միքայելյանի «Գոշ» եւ «Ֆրոնտից եկածը», որոնք անցել են շռնդալից հաջողությամբ: Ի դեպ «Գոշի» բեմադրիչը եղել է Վարդան Աճեմյանը: Թատրոնի հաջորդ վերելքի տարիները եղել են 50-ական թվականների սկզբները, երբ թատրոնը ղեկավարել է բեմադրիչ Հովհաննես Կարապետյանը, առաջին անգամ բեմադրելով Շեխպիրի «Ջմեռային հեքիաթ» ներկայացումը, որը մնացել է թատրոնի պատմության մեջ: 1972-1996 թթ. եւ նաեւ 2008-ից առ այսօր թատրոնը ղեկավարել եւ ղեկավարում է ճանաչված բեմադրիչ Վահե Շահվերդյանը (որը ոչխի կանգնացրեց նաեւ Սունդուկյանի մայր թատրոնը 13 տարի շարունակ, որի գնալուց հետո այսօր մայր թատրոնը կարծես անգործության է մատնված): Շահվերդյանի շնորհիվ Աբելյանի թատրոնի խաղացանկում տեղ գտավ Չեխովի «Երեք քույր» (միջազգային ճանաչում բերեց այս գործը եւ արժանացավ բազմաթիվ փառատոների մրցանակներին), Շեխպիրի «Ռիչարդ 2-րդ», Լերմոնտովի «Դիմակահանդես», Շիրվանզադեի «Քաոս» եւ այլն: Թատրոնը լինելով ոչ մայրաքաղաքային թատրոն բեմադրել է Շեխպիրի «Օթելլո», «Ջմեռային հեքիաթ», «Մակբեթ», «Լիր Արքա», «Ռոմեո եւ Ջուլիետ» գործերը եւ բարձր գնահատանքի արժանացել: ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ Հովհ. Աբելյանի անվ. պետթատրոնի նախաձեռնությամբ մշակվել ու անցկացվելու են բազմաթիվ հոբելյանական միջոցառումներ: Սեպտեմբերի 18-ին Ս. Խալաթյանի «Հրաղադար» պիեսի առաջնախաղով բացվել է թատրոնի հոբելյանական թատերաշրջանը եւ թատրոնի պատմությանը նվիրված ֆոտոցուցահանդես: Իսկ սեպտեմբերի 26-ից հայտարարվել է թատերական տասնօրյակ:

Մշակույթի փոխնախարար **Արթուր Պողոսյանը**, Աբելյանի թատրոնի ղեկավարությունը, գլխավորությամբ թատրոնի գեղեցիկ ՀՀ ժողովրդական արտիստ Վահե Շահվերդյանի, ներկայացրին 80-ամյա թատրոնի անցած ուղին, նշեցին ձեռքբերումներն ու արժանացած բազմաթիվ միջազգային մրցանակները ու պարգեւներն եւ շռնդալից հաջողությունները ոչ միայն Հայաստանի մարզերում, Արցախում, այլ նաեւ Մոսկվայում, Ռիգայում, Լիսաբոնում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Վրաստանում, Կիեւում, Մինսկում եւ այլուր: Պրն Պողոսյանը տեղակայցրեց, որ նախարարության ֆինանսավորմամբ մասնակի հիմնանորոգվում է թատրոնի շենքը, կիրառարկվի թատրոնի 80-ամյա պատմությանը նվիրված գիրք-ալբոմ եւ շուտով հանդիսատեսի դատին կհանձնվի Շիլլերի «Խարդավանք եւ սեր» ներկայացումը՝ Վահե Շահվերդյանի բեմադրությամբ: Հոկտեմբերի 9-ին Վանաձորի Հովհ. Աբելյանի անվան թատրոնում տեղի կունենա թատրոնի հիմնադրման 80-ամյակին նվիրված հոբելյանական երեկո, որի ընթացքում մի շարք պետական կառույցների կողմից թատրոնի նվիրյալները կպարգեւատրվեն՝ հոբելյանի առիթով:

Լրագրողների հետ հանդիպումը մասնակցում էին թատրոնի դերասան, Թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղի հիմնադիր տնօրեն ՀՀ ժող. արտիստ Հակոբ Ազիզյանը, երիտասարդ դերասան, բան. գիտ. թեկնածու Էֆրիկ Զոհրաբյանը, թատրոնի գեղեցկուհի անդամ, լրագրող Զանիբեկ Ղուկասյանը եւ գրական մասի վարիչ Լեւոն Մուքաֆյանը: Պրն Շահվերդյանն ասաց, որ 1974-ից սկսած երկու տարին մեկ աբելյանցիները հանդես էին գալիս Արցախում, «քանզի հրաշալի հանդիսատես կար, որոնց ընկալմամբ մենք սնուցում էինք մեր մակարդակը եւ որակը»: Թատրոնում մեծ ուշադրություն են դարձնում երիտասարդներին: Ստեղծվել է երիտասարդական ստուդիա, որի պատասխանատուն է Էֆրիկ Զոհրաբյանը: Թատերագետ Լեւոն Մուքաֆյանը ներկայացրեց թատրոնի անցած 80 տարիների գործունեությունը, չմոռանալով ասել նաեւ, որ եղել է մի շրջան, որ թատրոնը անկում է ապրել: Իսկ այժմ թատրոնը կրկին վերելքի ուղին է բռնել ու իր խաղացանկում ընդգրկել է շուրջ 19 ներկայացումներ ժամանակակից, եվրոպական, ռուսական, հայկական գործերով: Չեն մոռացվել նաեւ նախկինում հաջողված ներկայացումները եւ դրանք կրկին նորովի մատուցվում են: Այս տարի խաղացանկը կհամալրվի Սունդուկյանի «Պեպո», Շիրվանզադեի «Չար ոգի» պիեսների բեմադրություններով, որոնց զուգահեռ կգործի նաեւ մոնո ներկայացումների համար նախատեսված փոքր բեմը, որտեղ իրենց առաջին քայլերը կանեն երիտասարդ ռեժիսորները, նկարիչները, դերասանները:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Մեկնարկում է «Դարձ առ գիրք» գրքարվեստի երկրորդ միջազգային փառատոնը

2012 թ. նախանշվող երկու կարեւորագույն իրադարձությունների՝ հայ գրատպության 500-ամյակի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից «Երեւանը գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառումներին ընդառաջ՝ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ, Խնկո Ամոր անվան ազգային մանկական գրադարանը եւ «Հայ գրքի կենտրոն» մշակութային միությունը՝ ս. թ. հոկտեմբերի 5-25-ը մանկական գրադարանում, դրա հարակից տարածքում, ինչպես նաեւ քաղաքի այլ վայրերում կազմակերպում է «Դարձ առ գիրք» գրքարվեստի միջազգային 2-րդ փառատոնը: Փառատոնն անցկացվում է Հայկական գրատպության 500-ամյակի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի հովանու ներքո:

Այս հրաշալի նախաձեռնության նպատակն է մեկ անգամ եւս արժեւորել գիրքն ու ընթերցանությունը, մշակութային երկխոսությունների միջոցով կամրջել տարբեր ազգերի արվեստն ու մշակույթը:

Փառատոնային ծրագիրն իր մեջ ներառում է բազմաբնույթ միջոցառումներ եւ ակցիաներ. գրքի ցուցահանդես-վաճառք, սեմինար-քննարկումներ, դասախոսությունների շարք, կլոր սեղաններ հայ եւ օտարազգի գրողների մասնակցությամբ, գրքերի շնորհանդեսներ, հեքիաթների ընթերցանության շարք՝ ՀՀ-ում հավատարմագրված դեսպանների մասնակցությամբ, բացօթյա ակցիաներ՝ գրաֆիտի, պատկերապատման, արվեստի ֆիլմերի գիշերային ցուցադրում, հոգեւոր երաժշտության համերգ, նկարչական մրցույթ-ցուցահանդես, հայկական տարազի ցուցադրություն, կենդանի տիկնիկների մասնակցությամբ թատերականացված ներկայացում եւ այլն:

Հոկտեմբերի 6-ին, ժամը 13:00-ին, ՀՀ մշակույթի նախարարությունում «Դարձ առ գիրք» գրքարվեստի միջազգային 2-րդ փառատոնին նվիրված ասուլիսին մասնակցում էին ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Արեւ Սամուելյանը, Խնկո Ամոր անվան ազգային մանկական գրադարանի տնօրեն Ռուզան Տոնոյանը, «Անտարես» հոլդինգի տնօրեն Արմեն Մարտիրոսյանը, Հրատարակիչների ազգային ասոցիացիայի նախագահ Մկրտիչ Կարապետյանը, Ազգային տարազների հեղինակ, Ժնեւի հայկական գրադարանի տնօրեն Նեւրիկ Ազատյանը:

Մակեդոնական արգելադաշտն էլ կործանվեց

Մնաց վերջինը՝ իռլանդականը

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը շարունակեց իր հաղթարշավը Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում՝ տոնելով 3-րդ անընդմեջ հաղթանակը, այն էլ խոշոր հաշվով, ինչն աննախադեպ արդյունք է մեր ընտրանու ողջ պատմությունում: Մեր ֆուտբոլիստները կրկին դրսևորեցին հաղթանակի հասնելու անկոտրում կամք, տեխնիկական բարձր վարպետություն, աչքի ընկան գրագետ գործողություններով ու արդյունավետ խաղով եւ 4-1 հաշվով համոզիչ հաղթանակ տոնեցին մակեդոնացիների նկատմամբ, որոնց հետ անցյալ տարի հյուրընկալվելիս կայացած խաղում վերջին վայրկյաններին ցավալիորեն ձեռքից բաց էին թողել հաղթանակը:

Խաղից առաջ ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը ՈՒԵՖԱ-ի հատուկ մրցանակը հանձնեց հավաքականում 124-րդ հանդիպումն անցկացնող Սարգիս Հովսեփյանին: Բավականին սուր մրցակցությունում արդեն առաջին խաղակեսում դաշտի տերերին հաջողվեց երկու անգամ գրավել մրցակցի դարպասը՝ լավ նախադրյալներ ստեղծելով հաղթանակի համար: 28-րդ րոպեին անհասկանալի բարձր վարպետությամբ աչքի ընկավ Յուրա Մովսիսյանը, որն աջ եզրում մեկը մյուսի հետեւից խաբս տալով մրցակցի 3 պաշտպաններին, գնդակը փոխանցեց Մարկոսին, որը դիպուկ հարվածով բացեց հաշիվը: Պակաս տպավորիչ չէր 6 րոպե անց Հենրիխ Մխիթարյանի «թնդանոթային համազարկը», որից հետո գնդակը հայտնվեց դարպասի վերին անկյունում:

Հարկ է նշել, որ հյուրերը եւս ակտիվ հարձակողական խաղ էին ցուցադրում, որի արդյունքում մի քանի անգամ սպառնացին մեր դարպասին: Հատկապես վտանգավոր էր Նովեսկու հեռահար ուժգին հարվածը, որից հետո Բերեզովսկին գեղեցիկ ցատկով փրկեց դրությունը:

Գովելի է, որ ընդմիջումից հետո էլ մեր ֆուտբոլիստները շարունակեցին հարձակողական ակտիվ գործողությունները, որոնց արդյունքում Գեւորգ Ղազարյանն ու Արթուր Սարկիսովը եւս երկու գոլ խփեցին: Հյուրերը դրանց պատասխանեցին Շիկովի գոլով: Հաշիվը կարող էր ավելի խոշոր լինել, եթե 2-րդ խաղակեսում գոլային պահերն օգտագործեին Յուրա Մովսիսյանը, Հենրիխ Մխիթարյանն ու Արթուր Սարկիսովը:

Եվ այսպես, եզրափակիչի ուղեգրի նվաճման ճանապարհին մնաց անկախ Հայաստանի պատմության մեջ ամենավճռորոշ հանդիպումն իռլանդացիների հետ, որը կայանալու է հոկտեմբերի 11-ին: Հուսանք, որ այն եւս հաջող ավարտ կունենա հայ ֆուտբոլիստների եւ բոլորիս համար:

Ուժերի ստուգատես աշխարհի առաջնությունից առաջ

Հայաստանի սամբոյի ֆեդերացիան, ՀԱՕԿ-ը եւ ՌԴ «Ռոսսոտրուդնիչեստվո» դաշնային ծառայության հայաստանյան ներկայացուցչությունը 2-րդ տարին անընդմեջ Երեւանում անցկացրին ԽՍՀՄ կրկնակի հերոս, լեգենդար օդաչու Նելսոն Ստեփանյանի հուշամրցաշարը: Այն նվիրված է ՀՀ անկախության հռչակման եւ ԱՊՀ կազմավորման 20-րդ տարեդարձերին:

Հուշամրցաշարին մասնակցեցին Ռուսաստանի, Հայաստանի եւ Արցախի շուրջ 100 սամբիստներ: Տղաները հաղթողի կոչումը վիճարկեցին քաշային 10 կարգերում, աղջիկները հանդես եկան քաշային 8 կարգերում:

Տղաների մրցաշարում քաշային 4 կարգերում հաղթողներ ճանաչվեցին հայաստանցի սամբիստներ Մաքսիմ Մանուկյանը (52 կգ), Էդգար Միքայելյանը (65 կգ), Կարեն Սիմոնյանը (81 կգ) եւ գերծանրքաշային Ժիրայր Վարդանյանը: Եվս 3 հայ սամբիստներ պատվո պատվանդանի առաջին աստիճանին կանգնեցին ՌԴ հավաքականի կազմում: Ոսկե մեդալների ու գավաթների արժանացան Արթուր Դավթյանը (60 կգ), Արթուր Հակոբյանը (75 կգ) եւ Դավիթ Հովհաննիսյանը (81 կգ): ՌԴ սամբիստներից առաջին տեղը գրավեցին նաեւ Վլադիմիր Կրասնագորսկին (48 կգ), Միխայիլ Դիյանովը (56 կգ) եւ Դմիտրի Տարգաշովը (87 կգ):

Աղջիկների մրցաոլորտում միայն Վիկտորիա Միսակյանին (60 կգ) եւ Նելլի Ավետիսյանին (65 կգ) հաջողվեց հաղթող ճանաչվել: Քաշային մյուս կարգերում ոսկե մեդալակիրներ դարձան ռուսաստանցիներ Ելիզավետա Կուլիկովան (44 կգ), Գալինա Պենկովան (48 կգ), Գուլֆիյա Մուխտարովան (52 կգ), Դարյա Սեդնովան (56 կգ), Նատալիա Կորոտկովան (70 կգ) եւ գերծանրքաշային Ալեսյա Կաշլեւան:

Թեեւ մրցումներին չէին մասնակցում հավաքականների ուժեղագույն մի քանի սամբիստներ, սակայն մրցաշարն անցավ դիտարժան ու համառ պայքարում: Այն սամբիստների համար ուժերի լավ ստուգատես էր հոկտեմբերի 13-17-ը Ռիգայում անցկացվելիք սամբոյի պատանիների, երիտասարդների եւ աղջիկների աշխարհի առաջնությունից առաջ: Բացի իրենց ունակությունները դրսեւորելուց, Երեւան ժամանած սամբիստները հնարավորություն ունեցան նաեւ ծանոթանալու Հայաստանի տեսարժան վայրերին՝ այցելելով էջմիածին, Գառնի, Գեղարդ:

ՈՒԵՖԱ-ն տուգանեց «Բարսելոնին»

ՈՒԵՖԱ-ն 110 հազար եվրոյով տուգանել է իսպանական «Բարսելոնին» Եվրոպայի Սուպերգավաթի խաղի ժամանակ թիմի երկրպագուների պահվածքի համար: «Պորտոյի» հետ խաղում, որում «Բարսելոնը» հաղթել էր 2-0 հաշվով, իսպանացի երկրպագուները ճայթռուցիկներ էին օգտագործել՝ նշելով սիրելի թիմի խփած յուրաքանչյուր գոլն ու ընդհանուր հաջողությունը:

Ընդհանրապես «Բարսելոնի» երկրպագուները Եվրոպայում համարվում են ամենաագրեսիվներից մեկը: Մայիսին, երբ թիմը նվաճել էր չեմպիոնների գավաթը, նրանք Բարսելոնում շշեր եւ քարեր էին նետել ոստիկանների վրա՝ սիրելով վերջիններիս ուժ կիրառել: Անկարգությունների ժամանակ ագրեսիվ տրամադրված ֆանատները կոտրել էին խանութների ցուցափեղկերը, ավտոբուսի կանգառները: Միջադեպի ժամանակ տուժել էր 132 մարդ, այդ թվում 37 ոստիկան:

Ռունիի հայրը ձերբակալվել է

«Մանչեսթր Յունայթեդի» եւ Անգլիայի հավաքականի հարձակվող Ուեյն Ռունիի հայրն ու նրա եղբայրը ձերբակալվել են պայմանավորված խաղերի կազմակերպման մեղադրանքով: 48-ամյա Ուեյն-ավագը եւ նրա 54-ամյա եղբայր Ռիչին Շոտլանդիայի առաջնության «Մազերվելլ»-«Հարտս» հանդիպման համար Լիվերպուլից խաղադրույք են կատարել՝ յուրաքանչյուրը 100-ական ֆունտ ստերլինգ, որ «Մազերվելի» ֆուտբոլիստը դաշտից կհեռացվի: Այդպես էլ տեղի էր ունեցել: 82-րդ րոպեին «Մազերվելի» կիսապաշտպան Սթիվ Ջենինգսն անվայել արտահայտության համար կարմիր քարտի էր արժանացել: Հանդիպումն ավարտվել էր «Խարտսի» 2-1 հաշվով հաղթանակով, ընդ որում գոլերից մեկը խփվել էր 11 մ հարվածով: Խաղի պայմանավորված լինելու մասին կասկածը հայտնել են բուքմեյքերները, որոնց մոտ խոշոր խաղադրույքներ են գրանցվել: Այս գործով կասկածվում են 9 հոգի: «Մազերվելի» ղեկավարությունը պատրաստ է համագործակցել օրինապահ մարմինների հետ:

ԲՈՒՅԼՔԱՄԱՐՏ

Դավիթ Հայրապետյանը բավարարվեց բրոնզե մեդալով

Բաքվում ընթացող բռնցքամարտի աշխարհի առաջնությունում կայացան կիսաեզրափակիչ մենամարտերը: ՌԴ հավաքականի անդամ Դավիթ Հայրապետյանին չհաջողվեց հաղթել օլիմպիական խաղերի չեմպիոն, աշխարհի կրկնակի չեմպիոն, չինացի Ցզոու Շիմինին: Վերջինս հաղթեց 15-8 հաշվով ու մտավ եզրափակիչ: Իսկ Դավիթը դարձավ աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր:

Պատանի շախմատիստները նախապատրաստվում են օլիմպիադային

Շախմատի Հայաստանի մինչեւ 16 տարեկանների հավաքականը նախապատրաստվում է Թուրքիայի Իզմիթ քաղաքում անցկացվելիք համաշխարհային պատանեկան օլիմպիադային: Այս մասին տեղեկացնում է armchess.am կայքը: Մեր թիմի կազմում հավաքականի գլխավոր մարզիչ Արսեն Եղիազարյանն ընդգրկել է միջազգային վարպետ Կարեն Հ. Գրիգորյանին, ՖԻԴԵ-ի վարպետ Հովհաննես Գաբուզյանին, Տիգրան Կ. Հարությունյանին, Արման Միքայելյանին եւ Զոհրակ Ադրեսյանին:

Հիշեցնենք, որ մեր հավաքականն անցյալ տարի փայլուն ելույթ էր ունեցել Թուրքիայում անցկացված պատանեկան օլիմպիադայում՝ նվաճելով չեմպիոնի տիտղոսը: Ներկայիս կազմից հավաքականում էին Կարեն Հ. Գրիգորյանն ու Հովհաննես Գաբուզյանը, մարզիչը դարձյալ Արսեն Եղիազարյանն էր: Համաշխարհային օլիմպիադաներում դա մեր պատանիների 2-րդ հաղթանակն էր: Իսկ առաջին անգամ մեր պատանիներն օլիմպիական չեմպիոն են հռչակվել 1998-ին: Այդ տարի հաղթանակը ձեռք բերվեց Լեւոն Արոնյանի, Գաբրիել Սարգսյանի, Տիգրան Լ. Պետրոսյանի եւ Վարուժան Հակոբյանի հիանալի խաղի շնորհիվ, որոնք ներկայումս հանրաճանաչ գրոսմայստերներ են:

Հանդբոլիստները սկսեցին մրցավեճը 4 ուղեգրերի համար

ՖԻՄԱ-ի դահլիճում մեկնարկել է հանդբոլի մինչեւ 17 տարեկան պատանիների Հայաստանի առաջնության 2-րդ փուլը: Ալավերդիում անցկացված առաջին փուլի արդյունքներով լավագույն ցուցանիշի հասած երեք թիմերը պետք է շարունակեին պայքարը 2-րդ փուլում: Սակայն Ալավերդու թիմը ֆինանսական դժվարությունների պատճառով չկարողացավ մրցավայր ժամանել եւ նրա փոխարեն 2-րդ փուլին մասնակցելու իրավունք տրվեց Վանաձորի 2-րդ հավաքականին, որը 4 թիմերի մրցավեճում 1-ին փուլում եզրափակել էր աղյուսակը:

Այսպիսով, 2-րդ փուլում եզրափակիչի 4 ուղեգրերի համար պայքարում են 6 թիմեր՝ Երեւանի հանդբոլի մասնագիտացված դպրոցի (ՀՄԴ), Արցախի, Վանաձորի 1-ին եւ 2-րդ, Շենգավիթի եւ Աջափնյակի հավաքականները:

Մրցումների առաջին օրը Վանաձորի 1-ին հավաքականը 32-9 հաշվով հաղթեց իր համաքաղաքացիներին: ՀՄԴ-ի թիմը 19-15 հաշվով պարտության մատնեց Աջափնյակին, իսկ Շենգավիթի թիմն առավելության հասավ արցախցիների նկատմամբ (30-27):

Իվանչուկն ամրապնդեց առաջատարի դիրքը

Չորսօրյա հանգստից հետո, որի ընթացքում «Մեծ սաղավարտ» մրցաշարի մասնակիցները բրազիլական Սան Պաուլուից տեղափոխվեցին իսպանական Բիլբաո, սկսվեց 2-րդ շրջանը: Լեւոն Արոնյանը սեւերով ոչ-ոքի խաղաց իսպանացի Ֆրանսիսկո Վալեխոյի հետ: Հիշեցնենք, որ առաջին շրջանում Արոնյանը հաղթել էր:

Ոչ-ոքի ավարտվեց նաեւ Մագնուս Կառլսենի եւ Վիշվանաթան Անանդի մրցավեճը: Իսկ ահա Վասիլի Իվանչուկը, որը միայն 6-րդ տուրի նախօրեին էր ժամանել Բիլբաո, սպիտակներով հաղթեց ճապոնացի Հիկարու Նակամուրային:

Այդ հաղթանակի շնորհիվ Իվանչուկը զգալիորեն ամրապնդեց առաջատարի իր դիրքը: 6 տուրից հետո նա վաստակել է 13 միավոր: 7-ական միավորով հաջորդ տեղերում են Լեւոն Արոնյանը, Հիկարու Նակամուրան, Վիշվանաթան Անանդը եւ Մագնուս Կառլսենը: 4 միավորով աղյուսակը եզրափակում է Ֆրանսիսկո Վալեխոն: 7-րդ տուրում Արոնյանը սպիտակներով կմրցի Կառլսենի հետ: Առաջին շրջանում նրանց մրցավեճն ավարտվել է ոչ-ոքի:

Նալբանդյանը պարտվեց

Տոկիոյի թենիսի մրցաշարի քառորդ եզրափակիչում Դավիթ Նալբանդյանը 4-6, 5-7 հաշվով պարտվեց բրիտանացի Էնդի Մարեյին ու դուրս մնաց հետագա պայքարից: Կիսաեզրափակիչում Մարեյը կմրցի իսպանացի Դավիթ Ֆեռերի հետ, որը հաղթեց չեխ Ռադեկ Շտեպանեկին (6-2, 7-6):

Կիսաեզրափակիչի մյուս զույգը կազմել են Ռաֆայել Նադալն ու Մարդի Ֆիշը: Նադալը հաղթեց Սանտյագո Հիրալդոյին (7-6, 6-3), իսկ Ֆիշը պարտության մատնեց Բեռնարդ Տոմիչին (6-7, 6-4, 6-1):

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

Առանց այդ ճյուղի չենք կարող դառնալ արդյունաբերական եւ բարձր տեխնոլոգիական երկիր

Ինչպես ենք զարգացնելու ճշգրիտ ճարտարագիտությունը Հայաստանում

«Արտահանման վրա հիմնված արդյունաբերության զարգացման ռազմավարությունը» արդեն շրջանառության մեջ է դրված: Թե ինչ նպատակ է հետապնդում այս ռազմավարությունը ընդհանուր առմամբ, անդրադարձել ենք «Պետությունը կաջակցի արդյունաբերության 11 ճյուղերին» («Ազգ», 27.09.2011) հրապարակման մեջ: Այս ռազմավարությունը առանձնահատուկ է նրանով, որ անկախության 20 տարիների ընթացքում առաջին անգամ պետության կողմից մշակվել է արդյունաբերության զարգացմանն ուղղված համալիր ծրագիր: Ինչպես նշել էինք, ծրագրի առաջին փուլի համար առաջնահերթ են համարվել կոնյակագործությունը, դեղարտադրությունը եւ ճշգրիտ ճարտարագիտությունը: Այս երեք ճյուղերից թերեւս առավել մանրամասնելու կարիք ունի վերջինը՝ ճշգրիտ ճարտարագիտությունը:

Ճշգրիտ ճարտարագիտությունը օպտիկական, էլեկտրոնային, մեխանիկական եւ մեքենաշինական արտադրանք թողարկող ճյուղն է: Ներկայումս Հայաստանում այս ճյուղի ձեռնարկություններն արտադրում են տարբեր տեսակի չափիչ, սնուցող, ջերմակարգավորիչ, օպտիկական, լազերային սարքեր, բժշկական եւ արդյունաբերական նշանակության գերկարծր եւ բարձր ճշգրտության գործիքներ, էլեկտրատեխնիկական սարքավորումներ, կապի միջոցներ եւ համակարգեր, աճեցնում բյուրեղներ: Խորհրդային տարիներին Հայաստանում գործում էին այս եւ ծանր մեքենաշինության ու հաստոցաշինության ավելի քան 150 ձեռնարկություններ: Ներկայումս, էկոնոմիկայի նախարարության տվյալներով, ճշգրիտ ճարտարագիտությունը ներկայացող ձեռնարկությունների թիվը 60-70 է, որտեղ աշխատում են մոտ 4000 մարդ: Այս ձեռնարկությունները թողարկում են 35 մլն դոլարի արտադրանք, որից 17 մլն դոլարն արտահանվում է (2010-ի տվյալներով):

Ի՞նչ վիճակում է այս ճյուղը ներկայումս: Հայաստանն այստեղ ունի խորհրդային գիտատեխնիկական հարուստ ժառանգություն, արտադրական կառույցներ, ԱՊՀ երկրների եւ Վրաստանի հետ ազատ առեւտրի ռեժիմ, ճարտարագիտական համալսարան, հաջողված կրթական ծրագրերի փորձ անդրազգային կորպորացաների հետ, այստեղ գործում են առաջատար մի շարք տեխնոլոգիական ընկերություններ («Սինոփսիս», «Նեյշնլ ինսթրումենտս» եւ այլն): Սակայն բացակայում են օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավման համար ենթակառուցվածքները, հետազոտությունների եւ մշակումների մակարդակը ցածր է, ֆինանսավորման գործիքները սահմանափակ եւ հիչ մատչելի են, ընկերություններում շուկայավարման եւ կառավարման մակարդակը ցածր է, համապատասխան գիտելիքներով եւ հմտություններով շրջանավարտների պակաս կա, իսկ կրթական համակարգում էլ բացակայում է լաբորատոր բազան, անհրաժեշտություն կա կրթական ծրագրերը համապատասխանեցնելու միջազգային պահանջներին:

Երկու փուլով՝ մինչեւ 2015-ը եւ մինչեւ 2020-ը, նախատեսվում է իրականացնել ոլորտի զարգացման աջակցության ծրագիրը: Մասնավորապես, մինչեւ 2015-ը նախատեսվում է օտաերկրյա ուղղակի ներդրումների, այդ թվում՝ անդրազգային կորպորացիաների կողմից, ներգրավվում «Մարս» գործարանի տարածքում ազատ տնտեսական գոտի ստեղծելու միջոցով, ֆինանսական աջակցություն նորարարական բիզնես նախագծերին, վենչուրային ֆինանսավորում, ներդրումային ծրագրերի եւ արտահանման ֆինանսավորում, կարողությունների զարգացում՝ ճարտարագիտական լաբորատորիաների ստեղծման, ճարտարագիտական համալսարանի (ՀՊՃՀ) հիմքի վրա տեխնոպարկի հիմնման եւ միջազգային չափանիշներին համապատասխան հետազոտական համալսարանի վերածելով, շուկաներ մուտք գործելու աջակցություն՝ շուկաների մասին տեղեկացվածության եւ խորհրդատվության ապահովման, գործարար կապերի հաստատմանն աջակցելու միջոցներով:

2015-ին ակնկալվում ենք այս ոլորտում ունենալ 2-4 առաջնակարգ անդրազգային կորպորացիաների արտադրություններ ազատ տնտեսական գոտում, 5-10 երկրորդ կարգի անդրազգային կորպորացիաների հետազոտությունների եւ մշակումների կենտրոններ, մոտ 10 ընկերությունների վենչուրային նախագծերի ֆինանսավորում: Այս պարագայում ոլորտի արտահանումը պետք է կազմի 50-95 մլն դոլար, աշխատողների քանակը՝ 5-6 հազար, կատարված ներդրումները՝ 40-85 մլն դոլար: Այդ ժամկետում պետք է ստեղծված լինեն «Մարսի» ազատ տնտեսական գոտին, ճարտարագիտական համալսարանի հիմքի վրա տեխնոպարկը, լաբորատորիաներն ու կրթական կենտրոնները:

Երկրորդ՝ 2015-2020 թթ. փուլում պետության համար արդեն թիրախ է դառնում խոշորագույն անդրազգային կորպորացիաների հետազոտությունների եւ մշակումների կենտրոնների հիմնումը Հայաստանում, հայկական ճարտարագիտական համալսարանի տարածաշրջանային-միջազգային դարձնելը, ճարտարագիտական նոր ուղղությունների խրախուսումը, ոչ ԱՊՀ երկրներ արտահանման խրախուսումը, Հայաստանը որպես ճարտարագիտական երկիր աշխարհին ներկայացնելը եւ այլն: 2020-ին ակնկալվում է ճշգրիտ ճարտարագիտության ճյուղի արտահանումը հասցնել 165-300 մլն դոլարի, աշխատողների քանակը՝ 8-9 հազարի, ներդրումները՝ 155-285 մլն դոլարի: Փաստորեն, ոլորտի արտահանման ծավալներն առաջիկա 9 տարիներին պետք է ավելանան 10-18 անգամ: Այդ ժամկետին արդեն առնվազն 5 առաջնակարգ եւ 10-15 երկրորդ կարգի անդրազգային կորպորացիաներ պետք է լինեն Հայաստանում եւ 20-35 տեղական ընկերություններ, որոնք մրցունակ են միջազգային շուկայում:

Ռազմավարության մեջ նշվում են նաեւ ծրագրի իրագործման ժամանակ հնարավոր ռիսկերը եւ դրանց մեղմացման ուղիները, ծրագրի ժամանակացույցը եւ ծախսերը: Նշված են ֆինանսական միջոցները, որոնք կուղղվեն ծրագրի իրագործմանը եւ դրանց ստացման աղբյուրները, այդ թվում՝ պետության եւ դոնորների մասնակցության բաժինները: Մինչեւ 2015-ն, օրինակ, նախատեսվում է ավելի քան 12 մլն դոլար ծախսել ոլորտի զարգացմանն աջակցելու համար:

Ամփոփելով՝ հարկ ենք համարում ընդգծել, որ այս ճյուղի զարգացումը, առանց թերագնահատելու արդյունաբերության մյուս ճյուղերը, Հայաստանի համար թերեւս ամենակարեւորն է: Առանց դրա մեր երկիրը չի կարող արդյունաբերական եւ բարձր տեխնոլոգիական դառնալ եւ աշխարհին ներկայանալ որպես այդպիսին: Միայն ծրագրային մշակումներով, առանց վերջնական արտադրանք ձեւավորելու, երկրի զարգացման լուրջ հեռանկարներ չենք կարող ակնկալել:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Վախճանվեց

Երեկ երեկոյան ուշ կաթվածի հետեւանքով վախճանվեց արվեստաբան, Երեւանի Ժողովրդական թանգարանի նախկին տնօրեն, Ի. Ջեւանը ֆանդակագործության կենտրոնի վերածելու նախաձեռնության գլխավոր հեղինակ Սարո Սարուխանյանը:

Մեր ցավակցությունները հարազատներին եւ ընկերներին:

Վաճառվում է Volkswagen Jetta

մակնիշի ավտոմեքենա, արծաթափայլ, արտ. 2000 թ., վաճ. 2001 թ., շարժիչը 2 լ., փոխանց. տուփը ավտոմատ, սրահը կաշվեղաստ, դիմացի նստատեղերը տաքացվող, հայելիները, լյուկը եւ ապակիները (մուգ) էլեկտր., ունի կոնդիցիոներ: Գերազանց վիճակ: 095 02 66 19:

Վաճառվում է

Daewoo Matiz Best

մակնիշի ավտոմեքենա 2008 թ., շարժիչը 1լ, վազքը՝ 4 300 կմ, արծաթագույն, ունի կոնդիցիոներ, հայելիները եւ ապակիները էլեկտր., գերազանց վիճակ է:

Հեռ.՝ (094) 577-578

ՎՐԱՆՆԱԲՆԱԿՆԵՐ

Ոստիկանություն. ապօրինի հավաքները սահմանափակում են այդ տարածքի մատչելիությունը

Վանուշ Խանամիրյանի վերջին հրաժեշտը՝ Հայֆիլհարմոնիայի դահլիճի նախասրահում

«Ազատության հրապարակում անցկացվող անօրինական հավաքը տեւական ժամանակ է, ինչ կոպտորեն խախտում է հասարակական կարգը: Հավաքի մասնակիցները, անտեսելով ոստիկանության օրինական պահանջները, Ազատության հրապարակը չեն ազատել տեղադրված վրաններից՝ դրանով իսկ սահմանափակելով այդ տարածքի մատչելիությունը այլ անձանց համար: Հավաքի կազմակերպիչների եւ մասնակիցների անօրինական գործողությունների արդյունքում վերանայվեց նաեւ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում ՀՀ ժողովրդական արտիստ Վանուշ Խանամիրյանի վերջին հրաժեշտի արարողությունը կազմակերպելու վերաբերյալ կառավարական հանձնաժողովի որոշումը: Սույն արարողության պատշաճ կազմակերպման նպատակով ՀՀ ոստիկանության բանակցությունները հավաքի կազմակերպիչների հետ արդյունք չտվեցին: Դրսեւորելով հանդուրժողականություն եւ պահպանելով հավաքի կազմակերպիչների հետ հետեւողականորեն բանակցելու որդեգրված սկզբունքը՝ ոստիկանությունը մինչ այժմ ձեռնպահ է մնացել օրինականության խախտման նման դրսեւորումների վերացմանն ուղղված միջոցառումներ իրականացնելուց՝ ապավինելով հավաքի կազմակերպիչների ողջամտությանը: Միաժամանակ, անօրինական հավաքի կազմակերպիչները եւ մասնակիցները հերթական անգամ տեղեկացվում են, որ հասարակական կարգի անհամաչափ խախտման դեպքում ոստիկանությունը ձեռնամուխ կլինի օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրականացմանը», նման հայտարարությամբ է հանդես եկել ՀՀ ոստիկանությունը:

Մյուս կողմից, տեղի տալով ՀԱԿ-ի ղեկավարության անդրդվելիության առաջ, կառավարական հուղարկավորման հանձնաժողովը երեկ որոշեց, որ Վանուշ Խանամիրյանի վերջին հրաժեշտը տեղի կունենա ոչ թե ազգային օպերայի եւ բալետի դահլիճի, այլ Հայֆիլհարմոնիայի դահլիճի նախասրահում, նույն՝ ժամը 11:00-14:00-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տոհմային երինջների ձեռքբերման մրցույթի մասին

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տոհմային երինջներ (հոլշտին, շվից, սիմենթալ ցեղերի) ձեռք բերելու նպատակով հայտարարում է մրցույթ:

Մրցույթին կարող են մասնակցել բոլոր անձինք, անկախ նրանց օտարերկրյա, ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող լինելու հանգամանքից:

Մրցույթի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝ մինչեւ սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 28-րդ օրվա ժամը 17:00-ն (ՀՀ կառավարական տուն N 3, 1-ին հարկ, 122 սենյակ): Նախարարությունը պարտավորվում է դիմումը ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի հրավերը տրամադրել մրցույթի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Մրցույթի հայտերը (ներառյալ բոլոր փաստաթղթերը) անհրաժեշտ է ներկայացնել ք. Երեւան, Կառավարական տուն N 3 հասցեով, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 30-րդ օրվա ժամը 17:00-ն, որոնք կարող են կազմված լինել կամ հայերեն, կամ ռուսերեն, կամ անգլերեն, կամ գերմաներեն:

Մասնակիցների որակավորման տվյալները՝ մրցույթի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնեն մրցույթի հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Մրցույթի մանրամասները ճշտելու նպատակով զանգահարել 529-333 հեռախոսահամարով:

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՎԱԶԳԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝7.10.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: